



European Bank
for Reconstruction and Development

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ**

**ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքում Ելփինի
ջրամբարի կառուցման**

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ**

Կատարող՝ «Քոնսեկոարդ» ՍՊԸ տնօրեն՝

Վ. Թևոսյան



Երևան – 2024

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՄ	Համաշխարհային բանկ
ԵՄ	Եվրոպական միություն
ՇՄՍԱԳ	Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ԶԿ	Ջրային կոմիտե
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԱՊ	Ազգային պարկ
ԶՕԸ	Ջրօգտագործողների ընկերություն
ԲԿՊ	Բնապահպանական կառավարման պլան
ՆԴՀ	Նորմալ դիմհարային հորիզոն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԻ և ՁԵՌՆԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ	6
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԶՐԱՄԲԱՐԻ ՏԱՐԱԾՔԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	7
2.1.	Տեղադիրքը.....	7
2.2.	Երկրաբանություն.....	10
2.3.	Սեյսմիկ պայմանները.....	14
2.4.	Կլիմայական պայմանները	14
2.5.	Զրային ռեսուրսներ	18
2.6.	Մթնոլորտային օդ.....	21
2.7.	Հողային ռեսուրսներ.....	21
2.8.	Բուսական և կենդանական աշխարհ	23
	2.8.1. Բուսականություն	23
	2.8.2. Կենդանական աշխարհ	24
2.9.	Բնության հատուկ պահպանվող տարածքներ	24
2.10.	Բնության հուշարձաններ	24
2.11.	Մշակութային առանձնահատկություններ.....	26
3.	ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ.....	27
3.1.	Վայոց ձորի մարզ.....	27
3.2.	Արենի համայնք.....	28
3.3.	Շահագրգիռ կողմերի ներգրավումը ՇՄՍԱԳ և իրականացման մեջ	31
	3.3.1. Շահագրգիռ կողմերի ներգրավմանը և հանրային խորհրդարկությանը ներկայացվող ՎՋԵԲ-ի, ԵՆԲ-ի և ԵՄ ՀՆԳ-ի պահանջները	32
	3.3.2. Շահագրգիռ կողմերի ներգրավմանը /հանրային քննարկումներին ներկայացվող ազգային պահանջներ	34
	3.3.3. Ծրագրի հանրային խորհրդարկության և քննարկումների սկզբունքները	36
	3.3.4. Ծրագրի շահագրգիռ կողմեր	38
	3.3.5. Համակարգում	40
4.	ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ	41
5.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	47
5.1.	Գյուղատնտեսության ոլորտի խնդիրներ	47
5.2.	Ելիին և Չիվա համայնքների ոռոգման համակարգի փաստացի վիճակը.....	49

5.3.	Ջրամբարի շինարարության համար պահանջվող հողատարածքները.....	49
5.4.	Մշակաբույսերի ոռոգման ջրապահանջի հաշվարկ	50
5.5.	Ելփին գետի հոսքի ուսումնասիրություն.....	53
5.6.	Բնապահպանական թողք.....	57
5.7.	Եզրակացություններ.....	57
6.	ՋՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ	58
6.1.	Ներածություն.....	58
6.2.	Եզրակացություն և առաջարկություններ.....	59
7.	ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	60
7.1.	Զրոյական տարբերակ	60
7.2.	Քննարկվող տարբերակները	61
8.	ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....	63
8.1.	Պատվար	66
8.2.	Հեղեղային ջրհեռ.....	67
8.3.	Շինարարական ջրհեռ	69
8.4.	Ոռոգման ջրթող և մայր ջրագիծ	69
8.5.	Ջրամբարի ծավալի որոշումը	72
8.6.	Բնապահպանական թողք.....	72
9.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	73
9.1.	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր.....	73
9.2.	Օդային ավազան	75
9.3.	Ջրային ռեսուրսներ	77
9.4.	Հողային ռեսուրսներ	79
9.5.	Աղմուկ	80
9.6.	Թափոնների կառավարում.....	80
9.7.	Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա	81
9.8.	Առողջապահական գործոններ	82
10.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	82
10.1.	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր դրույթներ	82
10.1.1.	Մթնոլորտային օդ.....	82

10.1.2.	Ջրային ռեսուրսներ.....	83
10.1.3.	Կենսաբազմազանություն.....	83
10.1.4.	Թափոնների կառավարում.....	85
10.1.5.	Պարմամշակութային և բնության հուշարձաններ.....	85
10.1.6.	Հողային ռեսուրսներ.....	86
10.1.7.	Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում.....	87
10.1.8.	Աշխատանքի անվտանգություն և առողջություն.....	88
10.1.9.	Հակահրդեհային միջոցառումներ.....	89
11.	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ	90
	Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան. մեղմացնող միջոցառումներ...	91
	Մշտադիտարկման պլան.....	97
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	100
	Հավելված 1. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ և ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ	ՆԱ
	ԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	101
	Հավելված 2. ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ.....	103
	Հավելված 3. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ.....	107

1. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԻ և ՁԵՌՆԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարությանը ԵՄ աջակցության շրջանակներում «Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխում. Արևելյան գործընկերության առաջնահերթությունները 2020թ-ից հետո» նախաձեռնության «Լրացուցիչ «Բ» նախաձեռնության» շրջանակներում նախատեսվում է կառուցել 17 ջրամբարներ: Դրանց շինարարության արդյունքում ոռոգման համակարգերը մեխանիկականից կփոխարինվեն ինքնահոսի՝ ինչը կնպաստի 1 խմ ոռոգման ջրի ինքնարժեքի զգալի նվազեցմանը, ինչն իր դրական ազդեցությունը կունենա գյուղատնտեսական մթերքների ձևավորվող արժեքի վրա:

Ծրագրով նախատեսված 17 ջրամբարներից մեկը՝ Ելփինի ջրամբարը, նախատեսվում է կառուցել ՀՀ Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում, Արփա գետի աջափնյա վտակ Ելփին գետի վրա՝ Ելփին և Չիվա համայնքների 300 հա գյուղատնտեսական հողատեսքերը ոռոգման ջրով ապահովվելու նպատակով:

Պահանջվող ծավալով ջրամբարի կառուցմամբ հնարավոր կլինի ապահովել սակավ ոռոգման ջրի կայուն և արդյունավետ օգտագործում՝ խթանելով գյուղատնտեսության զարգացումը, ինչպես նաև նվազեցնելով թիրախային խմբի խոցելիությունը կլիմայական փոփոխությունների ազդեցության հանդեպ: Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա լուծել մի շարք արմատական հիմնախնդիրներ՝

- կուտակել գետի օգտագործելի հոսքի մի մասը, կարգավորել ջրահոսքերը՝ ապահովելով բնապահպանական թողքերը,
 - հրաժարվել մեխանիկական եղանակով ոռոգման ջրի մատակարարումից և 150 հա հողերի ոռոգումը փոխադրել ինքնահոս եղանակի, խնայել զգալի չափով էլեկտրաէներգիա, կրճատել շահագործման ու պահպանման ծախսերը,
 - բարձրացնել ներկայումս ինքնահոս եղանակով ոռոգվող 150հա ոռոգելի հողերի ջրապահովվածությունը՝ ապահովելով կայուն ջրամատակարարում ողջ ոռոգման շրջանում:

Ներկայացվող ծրագրի պատվիրատուն է ջրային կոմիտեն: Ծրագիրը ֆինանսավորվում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի /ՎԶԵԲ/ կողմից:

Ջրային կոմիտեն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է, որը մշակում և իրականացնում է պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման ու օգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Ջրային կոմիտեի հասցեն՝ ՀՀ, 0010, Երևան Վարդանանց փող., 13ա շենք:

Ելփինի ջրամբարի ծրագրի սույն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման աշխատանքների շրջանակներում ծրագրի ձեռնարկող է հանդիսանում «Քոնսեկորդ» ընկերությունը:

Ընկերության գործունեության հասցեն՝ ՀՀ, Երևան, Սեբաստիայի փողոց 31/2:


Էլ.փոստ՝ inbox@consecoard.am, tevosyan@consecoard.am,

Կայքէջ՝ www.consecoard.am


2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԶՐԱՄԲԱՐԻ ՏԱՐԱԾՔԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Տեղադիրքը

Ելփինի ջրամբարի համար հայցվող տարածքը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի արևելյան մասում, ընդգրկելով Արենի խոշորացված համայնքի հյուսիս-արևմտյան տարածքը, Ելփին բնակավայրից 2600 մետր հյուսիս-արևելք: Տեղամասի կենտրոնական մասն ունի հետևյալ կոորդինատները. X-8511198.66, Y-4410307.02, Z-1670: Հետազոտվող տարածքը ներկայացված է իրավիճակային պլանի վրա:



Նկար 1. Զրամբարի տեղադիրը



Նկար 2. Իրադրային սխեմա

Ռելիեֆ

Գեոմորֆոլոգիական տեսանկյունից, հետազոտվող տեղամասը զբաղեցնում է Քարկաստարի լեռների հարավ-արևմտյան լանջերը: Շրջանի ողջ տարածքը բնութագրվում է որպես տիպիկ լեռնային շրջան՝ կտրտված ռելիեֆով:

Ռելիեֆը ձորակային է, հատված է Ելփին գետի գետային ցանցով և ժամանակավոր ջրահոսքերով, ունի դեպի հարավ-արևմուտք կողմնորոշված ընդհանուր թեքություն: Ձևաչափական դասակարգմամբ, տեղանքը կարելի է դասել խիստ մասնատված տեսակի:


Ըստ տեղագրական հանույթի բացարձակ նիշերի, ուսումնասիրվող տարածքի մակերևույթի ռելիեֆի բարձրությունները տատանվում են 1649.0 – 1700.0 մ սահմաններում: Արփա գետը հիմնական ջրային երակն է: Սնումը՝ հիմնականում մթնոլորտային տեղումների և ձնհալի հաշվին է:



Նկար 3. Տեղանքի ռելիեֆի պատկերը

2.2. Երկրաբանություն

Ուսումնասիրվող տարածքի սահմաններում լայն զարգացում ունեն պլիոցենի (միոցեն-պլիոցենի) գոյացումները: Նրանք ներկայացված են հրաբխածին և հրաբխածինա-նստվածքային ապարերի հզոր հաստվածքով /ստվարաշերտով/, որոնք զբաղեցնում են ջրբաժան մասը համարյա ամբողջությամբ: Ստվարաշերտի հարավային սահմանը հյուսիսայինի համեմատ հստակ է արտահայտված՝ բարձր և խոշոր դարափուլերի տեսքով և ձգվում է արևելքից դեպի արևմուտք Վարդաշատ-Հորտուն-Էլփին-Ռինդ-Աղավնաձոր-Գետափ բնակավայրերի գծով (Նկ. 4):



Նկար 4. Ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական քարտեզը

Տեղամասի տեկտոնիկան

Տեկտոնիկայի առումով նախատեսվող Ելփինի ջրամբարի շրջանը գտնվում է ծալքավոր գոտում, որը ներկայացված է թույլ տեղախախտված հրաբխածին գոյացումներով, որոնք թաքցնում են ավելի հին կառուցվածքները:

Էոցենի, օլիգոցենի և միո-պլիոցենի ապարները, սկսած Երանոսի լեռնաշղթայից մինչև Արփա գետի միջին հոսանքը, ներկայացված են սովորական նստվածքային գոյացումներով, իսկ Արփա գետի վերին հոսանքում՝ հրաբխածին գոյացումներով:

Նախատեսվող Ելփինի ջրամբարը գտնվելու է այդ հրաբխածինային ստվարաշերտում: Տեղամասն իրենից ներկայացնում է հյուսիս-արևելյան տարածմամբ անտիկլինալ ծալք /կամարածալք/: Անտիկլինալի առանցքը անցնում է 2456,0 մ բարձրության նիշից դեպի արևմուտք՝ 2190,3 մ և 2320,9 մ բարձրության նիշերով:

Անտիկլինալի միջուկում մերկանում են էոցենի խրաբխածինա-նստվածքային ապարները, որոնց կտրել է գրանոդիորիտային կազմի ինտրուզիվը: Այստեղ նկատվում են մի շարք դիզյունկտիվ խախտումներ, որոնք ունեն հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան տարածման սահքի հայելիներ: Տեղամասում դիտվում է մեկ խախտում (խզվածք), որը կապակցված է օլիգոցեն-միոցենի շրջանի տեկտոնական շարժումների հետ:

Այդ գոտին տարածվում է հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք, սկսած Վրթանես գյուղի ավերակներից մինչև Քարկատարի լեռների հարավային լանջերը և Գնդասարի լեռների արևելյան լանջերը:

Այդ գոտում դիտվում են նաև ուրիշ խախտումներ: Նրանցից մեկը (ավելի մեծը) անցնում է համարյա անտիկլինալի առանցքի երկայնքով և ունի կտրուկ, հյուսիս-արևմտյան անկում: Ներկայացված է խիստ ջարդոտված, փշրաքարացած և հղկմամբ ջարդած ապարներով:

Բոլոր ապարները խիստ ճեղքավորված են, ճեղքերի լայնությունը կազմում է 0,3-2,5 սմ: Ճեղքերի մեծ մասի մոտ դիտվում է հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան տարածում: Օդալուսանկարահանման նյութերի վերծանման արդյունքներով որոշվել է ժայռային գրունտների անջատությունների տարածումը: Այդ ճեղքերի հետ համընկնում է նախատեսվող ջրամբարի պատվարի տարածքը:

Նկարագրվող խզվածքի սահմաններում բոլոր ապարները (անդեզիտներ և տուֆաբրեկչիաներ) համարյա լրիվ ենթարկված են հիդրոթերմալ փոփոխությանը՝

սերիցիտավորման, կառլինացման և պիրիտավորման: Հիդրոթերմալ եղանակով կերպափոխված գոտիները ամբողջությամբ ներկայացված են կավայնացված նյութով:

Տեղամասի տեկտոնիկան բավականին բարդ է և ունի մանրամասն հետազոտման կարիք: Այդ խզվածքը (գոտին) նախկինում բավարար ուսումնասիրված չէր: Հետազոտման մանրամասն արդյունքները ներկայացված են ստորև, որտեղ ներկայացված է նրա ակտիվության և ջրամբարի վրա ազդեցության աստիճանը:

Ջրաերկրաբանական պայմանները

Հետազոտությունների կատարման պահին գրունտային ջրերի վերին հորիզոնը գրանցվել է հետևյալ հորատանցքերում - BH-1, 1b, 2, 3, 6a, 7, 12, 13, 14. 0.3-33.0մ խորությունների միջակայքում:

Մթնոլորտային տեղումների և Ելփին գետի ջրերը, փուխր բեկորային և ճալաքարա-կոպճային գոյացումների միջոցով ներթափանցելով արաջացնում են միջմակերեսային ջրային հորիզոն: Հիմնական ստորգետնյա ջրերի մեծ մասը կուտակվում է նիջին Պալեոգենի հրաբխային ապարներով ներկայացված՝ տարածաշրջանային ջրամբար շերտի վերևում: Ըստ տեղադրման, սնման և բեռնաթափման պայմանների, ստորգետնյա ջրերը վերաբերվում են գրունտային ջրերին:

Տարածքի երկրաբանական և ջրաերկրաբանական մանրամասն ուսումնասիրությունը իրականացվել է «ԳԵՈՌԻՍԿ» գիտահետազոտական ընկերության կողմից, որի հաշվետվությունը ներկայացված է նախագծային փաթեթի կազմում:

Երկրաբանական և ինժեներաերկրաբանական պրոցեսները

Վտանգավոր ֆիզիկաերկրաբանական պրոցեսներն ու երևույթները տարածքում ներկայացված են սողանքային պրոցեսներով և արտահայտված են սողանքային 2 տեղամասերով EL-1 և EL-2: EL-1 սողանքային մարմինը, 1,6 հա մակերեսով, գտնվում է նախատեսվող ջրամբարից 200 մետր դեպի հյուսիս: Հարկ է նշել, որ սողանքային մարմնի տեղադիրքը համընկնում է մեր կողմից ենթադրվող խզվածքի գոտու հետ: Սողանքը ներկայումս ժամանակավոր կայունացած վիճակում է: EL-2 սողանքային մարմինը, 0.05 հա մակերեսով, գտնվում է նախատեսվող պատվարից 550 մետր դեպի հյուսիս-արևելք և փոքր չափերի հետևանքով վստահ ներկայացնում տարածքի ապագա շահագործման համար:



Նկար 5. EL-1



Նկար 6. EL-2

2.3. Սեյսմիկ պայմանները

Ելփինի ջրամբարի տարածքի սեյսմիկ վտանգի հավանականային վերլուծությունը (ՍՎՀԳ) իրականացվել է Ելփինի նախագծվող ջրամբարի պատվարի հարթակի համար: Ելփինի ջրամբարի պատվարի տեղամասի սեյսմիկ վտանգի հավանականային գնահատումը (ՍՎՀԳ) իրականացվել է «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայության», Հայկական սեյսմոլոգիայի և Երկրի ֆիզիկայի ասոցիացիայի, «Տերրաֆորմ» ՍՊ ընկերության կողմից՝ համատեղ:

ՍՎՀԳ-ն կատարելու համար օգտագործվել է գրականության մեջ լավ նկարագրված ստանդարտ մեթոդաբանությունը:

Նախագծում կիրառվել է R-CRISIS համակարգչային ծրագիրը, որը թույլ է տալիս հաշվի առնել մուտքային տվյալների անորոշությունները, օգտագործելով «տրամաբանական ծառի» մոտեցումը:

Վտանգի գնահատման արդյունքները ներկայացված են վտանգի կորերի տեսքով՝ միջին արժեքի և 84% վստահելիություն մակարդակի համար, և սպեկտրալ արագացումների գրաֆիկներով՝ 475 և 10000 տարի կրկնելիության ժամանակահատվածների և դեթերմինիստական գնահատման համար:

Ելփինի պատվարի հարթակի համար առավելագույն հորիզոնական արագացման միջին արժեքը 475 և 10000 տարի կրկնելիության ժամանակահատվածների համար համապատասխանաբար կազմում է՝ 0.14g և 0.45g, իսկ 84% վստահելիության մակարդակի համար՝ 0.16 g և 0.52g:

Տարածքի սեյսմիկ գնահատման հաշվետվությունը ներկայացված է նախագծային փաթեթի կազմում:

2.4. Կլիմայական պայմանները

Գետավազանի ուսումնասիրվող հատվածում օդերևութաբանական կայաններ չկան: Այդ պատճառով հաշվարկային հատվածքի կլիմայական էլեմենտների նկարագիրը տրվում է համաձայն մոտակա Անանուն լեռնանցք (I-ցք) կայանի տվյալների, քանի որ Ելփինի ջրամբարի տեղամասում Ելփին գետի միջին հավասարակշռված բարձրությունը և օդերևութաբանական կայանի բարձրությունը գրեթե նույն են և կարող են օգտագործվել կլիմայական էլեմենտների տարեկան ընթացքը գնահատելու համար:


Կլիման պատվարի հատվածքում չափավոր է, երկարատև տաք ամառներով և ցուրտ ձմեռներով: Կլիմայի տիպերից այստեղ արտահայտված են՝

- բարեխառը գոտի՝
- չոր տաք ամառ և ցուրտ ձմեռ,
- կարճատև զով ամառ և ցուրտ ձմեռ,
- բարձր լեռնային ցուրտ կլիմա:

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը 12.3°C է, հունվարին՝ -2.6°C , ապրիլին՝ 12.1°C , օգոստոսին՝ 25.9°C , հոկտեմբերին՝ 13.9°C : Ջերմաստիճանի տարեկան ամպլիտուդան 25°C է: Օդի ջերմաստիճանի բացարձակ նվազագույն -24°C դիտվել է հունվարին, իսկ բացարձակ առավելագույնը՝ 42°C , դիտվել է հուլիսին:

Տեղումների միջին տարեկան քանակությունը 400մմ է: Տեղումների առավելագույնը թափվում է ապրիլին 85մմ, իսկ նվազագույնը օգոստոսին՝ 14մմ: Տեղումների գրեթե 42% թափվում է մարտ-մայիս ամիսներին:

Տարածաշրջանի քամիների վարդը բերված է ստորև.



Նկար 7. Քամու վարդը

Ստորև բերված են կլիմայական տվյալները ըստ նախատեսվող ջրամբարի տարածքին առավել մոտ Արենիի դիտակայանի:

Հարկ է նշել, որ քամու պարամետրերը նշվել են ըստ Եղեգնաձոր օդերևութաբանական կայանի տվյալների, քանի որ Արենի օդերևութաբանական կայանում դրանք չենք իրականացվում:

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան ⁰ C	Բացարձակ նվազագույն ⁰ °C	Բացարձակ առավելագույն ⁰ °C
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արենի	-2.6	-0.1	5.7	12.1	17.1	21.9	26.1	25.9	21.1	13.9	6.7	0.1	12.3	-24	42

Աղյուսակ 2.2. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
														Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Արենի	71	68	60	59	57	51	46	46	50	59	67	71	59	71	60	46	34

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ		Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ	
	Ըստ ամիսների																
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12					
Արենի	30	32	43	56	53	35	18	9	11	35	33	30	385	168	217		
	24	31	34	34	45	38	47	27	27	36	23	25	47				

Աղյուսակ 2.4. Ձյան ծածկույթ

	Ֆինանսեր			
Բնակավայրի անվանումը	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակ, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, մմ
Արենի	58	36	62	21

Աղյուսակ 2.5. Քամու պարամետրերը

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անոթորի կրկնելիությունը,%	Միջին ամսական արագությունը,մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին,	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-ձետրվար ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Հյուսիսային (Հս)	Հյուսիս-արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ - արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Եղեգնաձոր	Հունվար	18	4	13	11	6	21	10	17	82	0.5	ՀվԱրլ	2.4.	ԱվԱրմ	1.7
		1.4	1.3	1.5	1.8	1.6	1.7	1.7	1.4						
	Ապրիլ	15	12	13	15	8	14	13	10	55	1.6				
		2.1	1.7	2.1	2.2	2.1	2.5	2.8	2.5						
	Հուլիս	19	10	18	20	6	9	9	9	48	1.8				
		2.8	1.9	2.6	2.4	2.2	2.2	2.5	3.1						
	Հոկտեմբեր	9	3	11	6	7	31	28	5	69	1.1				
		1.7	1.5	1.6	1.9	1.8	2.2	2.4	2.2						

2.5. Զրային ռեսուրսներ

Ինչպես վերը նշվել է, ջրամբարը նախատեսվում է կառուցել Արփա գետի աջափնյա վտակ Ելփին գետի վրա:

Արփա գետի ջրավազանը ներառված է Արարատյան ջրավազանային կառավարման տարածքում:

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային, այդ թվում նաև Սևանա լճի ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի 75-Ն որոշման: Գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Զրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրո-օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ 2022 թ. ամփոփագրի Արփա գետի ջրի որակը Զերմուկ քաղաքից վերև, Վայք քաղաքից վերև և ներքև, Եղեգնաձոր քաղաքից վերև և Արենի գյուղից ներքև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Զերմուկ քաղաքից վերև՝ պայմանավորված ամոնիում իոնով, երկաթով, կախությամբ չոր նյութերով, Վայք քաղաքից վերև՝ երկաթով և ալյումինով, Վայք քաղաքից ներքև՝ երկաթով, Եղեգնաձոր քաղաքից վերև՝ մոլիբդենով և երկաթով, Արենի գյուղից ներքև՝ պայմանավորված մոլիբդենով, երկաթով և բարիումով: Ելփին գետի աղտոտվածությունը ներկայացվում է ըստ նախահձային «Մոդուլ» ընկերության տվյալների.

Աղյուսակ 2.6. Իոնների պարունակությունը

Իոններ	Պարունակությունը լիտրում		
Կատիոններ	մգ	մգ-էկլ	% մգ-էկլ
Ca	112	5,4	44,30
Mg	53	4,45	36,10
Na+K	40	1,8	14,90
Կատիոնների գումարը	205,0	11,65	100,6
Անիոններ			
HCO ₃	86	1,42	12,19
CL			
SO ₄	120	2,49	21,40
Անիոնների գումարը	206,00	3,91	33,6

Աղյուսակ 2.7. Այլ ցուցանիշներ

Ցուցանիշի անվանումը և չափման միավորը	
1. Չոր մնացորդը, մգ/լ	567
2. Թթվայնությունը	5,7
3. Հանքայնացումը մգ/լ	612
4. Կոշտությունը մգ-էկվ/լ	
4.1. Ընդհանուր	9,12
4.2. Կարբոնատային (ժամանակավոր)	2,3
4.3. Ոչ կարբոնատային	7,53
5. Ֆիզիկական հատկությունները	
Թափանցիկությունը	պարզ
Համր	ա/հ
Գույնը	ա/գ
Հոտը	ա/հ
Նստվածքը	հողի փոքր նստվածք

2.5.1. Հիդրոլոգիական հետազոտություններ

Ջրամբարի տեղամասում հիդրոլոգիական հաշվարկների կատարման համար որպես բազային տվյալների հիմք վերցվել է Գլաձոր գետի Վերնաշեն դիտակետի տվյալները, քանի որ վերջինս ունի շուրջ 58 տարվա դիտարկումների շարք, ինչպես նաև Ելփին գետի Ելփին դիտակետը, քանի որ գտնվում է ջրամբարի պատվարի տեղամասից մի փոքր ներքև:

Գլաձոր գետի Վերնաշեն դիտակետ


Վերնաշեն դիտակետում դիտարկումների շարքը 1964 ÷ 2021 թվականների համար ունի 96.84% լրացվածություն: Բացակայում է միայն 1965-1969 թվականների համար հոկտեմբեր-փետրվար ամսվա միջին ամսական ելքը: Տարեկան առավելագույն ելքերը 100%-ով առկա են:

Ելփին գետի Ելփին դիտակետ

Ելփին դիտակետի տասնմեկ տարվա դիտարկումների շարքն ունի 85.83% լրիվություն: Տվյալներում 1965-1969 թվականների դիտարկումները ամբողջությամբ չեն իրականացվել և հիմնականում դիտարկվել են գարնան ու ամռան ամիսների ելքերը: Ուստի հաշվարկների համար ընդունվել են 1970 թվականից հետո դիտարկված տվյալները :

Հոսքի ներդարեկան բաշխում

Ելփին գետն ունի ՀՀ գետերին բնորոշ հոսքի ներտարեկան բաշխում: Գետն ունի հստակ արտահայտված գարնանային վարարումների փուլ, ձմեռային և ամառային սակավաջրության փուլ և անշնանային հորդացումների փուլ: Գարնանային վարարումներն առավելապես առաջանում են ձնհալի և անձրևների շնորհիվ աշնանային հորդացումներ կարող են լինել անձրևային տեղումների արդյունքում, այն էլ կարճ և ոչ հստակ արտահայտմամբ: Սակավաջուր սեզոնին գետը հիմնականում սնվում է աղբյուրներից, ամառային սակավաջրությունն երբեմն կարող է ուղեկցվել անձրևներով: Ելփինի ջրամբարի հատվածում տարեկան հոսքի ծավալի 80-90%-ն անցնում է գարնանային վարարումների ընթացքում:



Նկար 8. Հոսքի ներդարեկան բաշխումը Ելփինի ջրամբարի հեղահատվածում տարբեր ապահովվածությամբ տարիների համար

Ելնելով Ելփին ջրամբարի գետահատվածքում հոսքի նորմայի հաշվարկային արժեքից, 50% ապահովվածությամբ ելքերով տարիների դեպքում գումարային հոսքի ծավալը կարող է հասնել 5.407 մլն. մ³-ի, 75% ապահովվածությամբ ելքերով տարիների դեպքում՝ 3.21 մլն. մ³, իսկ 95% ապահովվածությամբ խիստ սակավաջուր տարիների դեպքում՝ 1.69 մլն. մ³:

2.6. Մթնոլորտային օդ

Ելփինի նախատեսվող ջրամբարի տարածքում մթնոլորտային օդը աղտոտող խոշոր արտադրական ձեռնարկություններ չկան, հիմնականում ավտոտրանսպորտի արտանետումներն են:

Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման: Մթնոլորտային օդի որակի ուսումնասիրությունները կատարվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից դիտակետերի միջոցով: Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2022թ. 2-րդ եռամսյակի հրապարակված տեղեկագրի՝ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների, Վայոց Ձոր մարզի Ելփին, Չիվա և մերձակա բնակավայրերի օդային ավազանի որակի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

Ստորև ներկայացվում են օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները¹ ըստ բնաչության թվի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց շարքին են պատկանում Ելփին, Չիվա և մերձակա բնակավայրերը:

- Փոշի՝ 0.2 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:




Անմիջապես տեղանքում մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության և աղմուկի մակարդակը պարզելու համար «Քոնսեկուարո» ընկերության մասնագետների կողմից նախատեսվում է իրականացնել չափումներ, որոնց արդյունքները կներկայացվեն ՇՄՍԱԳ հաշվետվությունում:

2.7. Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում գերակշռում են շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած հողային տիպերը, որոնց ենթատիպերի տարածումը ներկայացված է ստորև բերված նկարում:

¹ ՀՀ բնապահպանության նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ. “ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները” ուղեցույց-ձեռնարկ: Երևան-2011

Նկարագրված հողային ենթատիպերի տարածումը ներկայացված է ստորև բերված նկարում:



Անմիջապես գործունեության տարածքի հողածածկի աղտոտվածության մակարդակը պարզելու նպատակով կատարվել է նմուշառում, նմուշը տեղափոխվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ լաբորատորիա: Անալիզի արդյունքները կներկայացվեն ՇՄՍԱԳ վերջնական հաշվետվությունում:

2.8. Բուսական և կենդանական աշխարհ

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված է տարածաշրջանի բուսականության և կենդանական աշխարհի հակրիճ նկարագրությունն ըստ գրականության տվյալների:

Հիմնական գնահատման փուլում նախատեսվում է իրականացնել դաշտային ուսումնասիրություն, որի արդյունքներով կազմված հաշվետվությունները կկցվեն ՇՄՍԱԳ վերջնական հաշվետվությանը:

2.8.1. Բուսականություն

Տարածաշրջանի բուսական ծածկը ներկայացված է Վայոց ձոր մարզին բնորոշ փետրախոտային տափաստանային բուսականությամբ: Այստեղ գերիշխում են փետրախոտերը (*Stipatirsa*, *S. cap illata*) , *Thmus kotschyanus*, *Tanacetumchiliop hyllum*:

Տարածված են նաև *Festuca valesiaca* Gaudin, *Koelera albovii* Domin., *Koeleriacri stata* (L. Pers., *E lytrigia t richophor* տեսակները:

Տարածաշրջանում հայտնի բուսատեսակներից 55-ը (ֆլորայի մոտ 6.1%-ը) գրանցված են 2010թ. ՀՀ Բույսերի Կարմիր գրքում, որոնք բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝ Կրիտիկական վիճակում գտնվող (CR)՝ 11 տեսակ: Դրանք են՝ Սոխ անհարթացողուն *Allium scabriscapum*, Սոխ թալիշյան *Allium talyschense*, Տերեփուկ Թամանյանի *Rhaponticoides tamanianae*, Ստեպտորամֆուս Չերեպանովի *Steptorhamphus czerepanovii*, Սոնալրջուն սրապտուղ *Sameraria cardiocarpa*, Սոնալրջուն լրջունատերև *Sameraria glastifolia*, Բոշխ կիլիկիական *Carex cilicica*, Գազ Ախունդովի *Astragalus achundovii*, Ազնի Շովիցի *Crataegus szovitsii*, Ստելերոպսիս Մադաքյանի *Stelleropsis magakjanii* և Խթանաբույս երկարածաղիկ *Centranthus longiflorus*:

Տարածաշրջանում հանդիպում են նաև 46 տեսակի էնդեմներ, որից 16 տեսակ Հայաստանի էնդեմներ, 20 տեսակ Հարավային Անդրկովկասի էնդեմներ, 6 տեսակ Անդրկովկասի էնդեմներ և 4 տեսակ Կովկասի էնդեմներ:

Հարկ է նշել, որ անմիջապես գործունեության տարածքում բացակայում են Կարմիր գրքային և վայրի բուսատեսակներ:

2.8.2. Կենդանական աշխարհ

Տարածաշրջանի կենդանական աշխարհը չափազանց բազմազան է: Թռչուններից հանդիում են բազմաթիվ ճնճղուկազգիներ, որոնցից են արտույտների, սերինոսների, դրախտապանների տարբեր տեսակները:

Տարածաշրջանում ողնաշարավոր կենդաններից դիտարկվել են նապաստակ, աղվես, սովորական դաշտամուկ, մոխրագույն առնետ:

Արձանագրվել են գայլի կենսագործունեության հետքեր: Նկատվել է դաշտային արտույտներ, բայց տեղամասի սահմաններում բներ չեն գտնվել:

2.9. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հայաստանում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ 60%-ը, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

Ջրամբարի տարածքը անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ների հետ չունի: Մոտակա ԲՀՊՏ-ն՝ «Եղեգիս» պետական արգելավայրը, հեռավորությունը ուղիղ գծով՝ ավելի քան 15 կմ:

2.10. Բնության հուշարձաններ

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Ելփին բնակավայրի վարչական տարածքում: Այն չի առնչվում բնապահպանական տարածքների, ինչպես նաև բնության հուշարձանների և պատմամշակութային հուշարձանների հետ: Այդուհանդերձ ստորև ներկայացվում է ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված Վայոց ձոր մարզում բնության հուշարձանների ցանկը: Համաձայն ցանկի ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-ն որոշմամբ մարզի տարածքում հաստատվել են բնության հետևյալ հուշարձաններ.

Երկրաբանական հուշարձաններ

«Տորք Անգեղ» քարե քանդակ	Վայոց ձորի մարզ, Ագարակաձոր գյուղից 1.5 կմ հվ-արլ, Անապատե վայրում
«Սֆինքս» քարե քանդակ	Վայոց ձորի մարզ, Ագարակաձոր գյուղ, Գրավ գետի կիրճում
«Սպիտակ քար» ժայռ-մնացուկ	Վայոց ձորի մարզ, Աղավնաձոր գյուղից 3 կմ հս-արմ, Աղավնաձոր-Ելփին ճանապարհի աջ կողմում
«Անանուն» տեկտոնական խախտում	Վայոց ձորի մարզ, Արենի գյուղի արլ մասում, Արփա գետի ձախ ափին
«Պահակային աշտարակ», Էրոզիոն ժայռ-մնացուկ	Վայոց ձորի մարզ, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին, Արփա գետի կիրճում, Գնդեվազ գյուղի դիմաց
«Անանուն» դայկա	Վայոց ձորի մարզ, Գնդեվազ գյուղից 1-1.5 կմ հս-արլ, Արփա գետի կիրճում, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին
«Անանուն» դայկաներ	Վայոց ձորի մարզ, Գնդեվազ գյուղից 4 կմ հս-արլ, Արփա գետի կիրճում, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին
«Անանուն» սյունաձև անջատմամբ բազալտներ	Վայոց ձորի մարզ, Գոմք գյուղի հս-արլ մասում, ձորակի աջ կողմում
«Անանուն» դայկա	Վայոց ձորի մարզ, Ելփին գյուղի հվ եզրին
«Անանուն» խզվածքային կառուցվածք	Վայոց ձորի մարզ, Ելփին գյուղի արմ ծայրամասում
«Անանուն» լավային հոսք	Վայոց ձորի մարզ, Շատին գյուղից 0.5 կմ արլ
«Անանուն» դայկայանման մարմին	Վայոց ձորի մարզ, Վերնաշեն գյուղից հս

Ջրաերկրաբանական հուշարձաններ

«Գրավի» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Աղավնաձոր գյուղից 5 կմ հվ, Գրավ գետի հովտում, ծ.մ-ից 1630 մ բարձրության վրա
«Պարույր Սևակ» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Աղավնաձոր գետի վերին հոսանքում, ծ.մ-ից 1985 մ բարձրության վրա
«Արտաղբյուր» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Եղեգիս գյուղից 2.7 կմ հս-արլ, Եղեգիս գետի աջ ափին, ծ.մ-ից 1840 մ բարձրության վրա
«Ջրովանք» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Արփի գյուղից 3 կմ հվ-արլ, Արփա գետի ձախ վտակ Ջրովանք գետակի ակունքում, ծ.մ-ից 1345 մ բարձրության վրա
«Առնետի» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Խաչիկ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1780 մ բարձրության վրա

«Մոզ» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Մալիշկա գյուղից 2.5 կմ արլ, Արփա գետի կիրճի աջ ափին, ծ.մ-ից 1170 մ բարձրության վրա
---------------	---

Ջրագրական հուշարձաններ

«Գետիկվանք» ջրվեժ	Վայոց ձորի մարզ, Եղեգիս գետի աջակողմյան վտակի վրա, Վարդահովիտ գյուղից 0.5 կմ արմ
-------------------	--

Բնապատմական հուշարձաններ

«Սմբատասար» բնապատմական համալիր	Վայոց ձորի մարզ, Արտաբույնք գյուղից 0.75 կմ արլ
«Բերդի գլուխ» ամրոցի հրվանդան	Վայոց ձորի մարզ, Գնդեվազ գյուղի հս-արմ եզրին
Վարդանես լճի համալիր	Վայոց ձորի մարզ, Ելփին գյուղից 3.5-4 կմ հս-արլ, նախկին Վարդանես գյուղի ավերակների մոտ, ծ.մ-ից 1748 մ բարձրության վրա

Կենսաբանական հուշարձաններ

«Կորնգան եղջյուրավոր»	Վայոց ձորի մարզ, Վարդենյաց լեռնանցք, Աղնջաձոր գյուղից 3 կմ հս-արմ
-----------------------	---

Ինչպես երևում է աղյուսակներից Ելփինի ջրամբարի համար նախատեսված տարածքում բնության հուշարձաններ չկան:

2.11. Մշակութային առանձնահատկություններ

Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում ՀՀ Կառավարության 2003 թվականի հունիսի 17-ի թիվ 754-Ն որոշմամբ հաստատված Վայոց ձոր մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների հետ: Այդուհանդերձ ստորև ներկայացվում է Վայոց ձորի մարզի Ելփին և Չիվա գյուղերում գրանցված հուշարձանների ցանկը:

ԳԵՐԵՉՄԱՆՈՑ	14-20-րդ դդ.	գ. մ.	խիտ կառուցապատված միջավայրում
խաչքար	14-րդ դ.		հվ կողմում, ընկած գետնին
ԳԵՐԵՉՄԱՆՈՑ	14-19-րդ դդ.	1 կմ հվ-ամ	Ելփին-Եղեգնաձոր ճանապարհի եզրին, բարձրադիր տեղանքում
մատուռ Թուխ Մանուկ	17-րդ դ., 19-րդ դ.		

խաչքար	14-րդ դ.		մատուռի հվ կողմում
ԵԿԵՂԵՑԻ	1908 թ.	հս մասում	կիսավեր
ԽԱՉՔԱՐ	10-րդ դ.	0,5 կմ հվ-աե	Եղեգնաձոր տանող ճանապարհի աջ կողմում, ամրացված բետոնով

Շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման փուլում նախատեսվում է իրականացնել տեղանքի հետազոտություն մշակութային ժառանգության օբյեկտների առկայությունը պարզելու նպատակով:

3. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

3.1. Վայոց ձորի մարզ

Վայոց ձորի մարզը գտնվում է հանրապետության հարավային հատվածում: Մարզը պետական սահմանով արևելքից և արևմուտքից սահմանակից է Ադրբեջանին: Հյուսիսից՝ Գեղարքունիքի մարզին, հարավից՝ Սյունիքի մարզին, իսկ հյուսիսարևմուտքից՝ Արարատի մարզին: Վայոց ձորի մարզը շրջապատված է բարձր լեռներով, ջրբաժան լեռնաշղթաներով, որոնք յուրահատուկ բնական պատկերներ հանդիսանալով նրա և հարևան տարածքների միջև, այն դարձնում են աշխարհագրական մի ամբողջություն: Վայոց ձորի մարզը ՀՀ ամենանոսր բնակչություն ունեցող մարզն է: Այն առանձնանում է նաև գյուղական նոսր բնակչությամբ: 2022թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 1.1 %,
- գյուղատնտեսություն 2.3 %,
- շինարարություն 2.4 %,
- մանրածախ առևտուր 0.7 %,
- ծառայություններ 0.6 %:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը գյուղատնտեսությունն է: Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում

որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև թռչնաբուծությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը: Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած է «Ջերմուկ» հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունները: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի): Մարզով է անցնում Հայաստանի Հանրապետությունն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության հեռանկարային զարգացման գործում: Մարզում ակնհայտ են ներքին և արտաքին զբոսաշրջության զարգացման մեծ հեռանկարները:

Աղյուսակ 3.1. Մարզի հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները

Տարածքը	2 310 քառ. կմ
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, %	7.8
Համայնքներ, 2023թ. տարեսկզբի դրությամբ	5
Քաղաքներ	3
Գյուղեր	52
Բնակչության թվաքանակը 2023թ. տարեսկզբի դրությամբ	47.7 հազ. մարդ
քաղաքային	16.2 հազ. մարդ
գյուղական	31.5 հազ. մարդ
Գյուղատնտեսական նշանակության հողեր, այդ թվում՝ վարելահողեր	189 537.1 հա 15 900.3 հա

3.2. Արենի համայնք

Արենի համայնքը կազմավորվել է 2017թ. հունիսին «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով:

Արենի խոշորացված համայնքը ընդգրկում է հետևյալ բնակավայրերը.

- գ. Ագարակաձոր
- գ. Աղավնաձոր
- գ. Արենի
- գ. Արփի
- գ. Գնիշիկ
- գ. Ելփին

- գ. Խաչիկ
- գ. Մոզրով
- գ. Չիվա
- գ. Ռինդ
- գ. Ամադու

Արենի գյուղ

Բնակչություն՝ 1 964

Արենի գյուղը գտնվում է Վայոց ձորի մարզում՝ Արփա գետի ստորին հոսանքի երկու կողմերում:

Արենի բնակավայրը Երևանից հեռու է 110 կմ, մարզկենտրոն Եղեգնաձորից՝ 20 կմ: Համայնքը ծովի մակարդակից բարձր է 980 մ: Բնակավայրի տարածքը հիմնականում ընկած է Արփա գետի հովտի լայնացած մասում և ավտոխճուղու երկարությամբ զարգանում է դեպի հյուսիս և արևելք: Գյուղի եզրերը աստիճանաբար բարձրացել են դեպի գետահովտի զառիթափ լանջերը:

Արենի գյուղում գործում է 2 գինու գործարան, որտեղ արտադրվում է «Արենի» տեսակի հանրահայտ գինի:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, հիվանդանոց, մշակույթի տուն, գրադարան:

Արենին ունի զբոսաշրջության մեծ պաշար՝ պատմամշակութային բազմաբնույթ բարձրարժեք հուշարձաններ: Համայնքի վարչական տարածքում է գտնվում միջազգային նշանակության հուշարձան Նորավանքի համալիրը: Բազմաթիվ են նաև բնության հուշարձանները՝ ժայռեր, ջրվեժներ, անդնդախորը ձորեր:

Ելփին գյուղ

Ելփին գյուղը գտնվում է ներկայիս Վայոց ձորի մարզի հարավ-արևմտյան մասում, հանդիսանալով մարզի դարպաս: Հողատարածությունները ձգվում են ծովի մակերևույթից 1400մ-ից մինչև 2800մ բարձրության սահմաններում: Բնակավայրը գտնվում է 1545մ բարձրության վրա: Մարզկենտրոն Եղեգնաձորից հեռու է 25 կմ, մայրաքաղաք Երևանից՝ 97 կմ: Ելփինն արևմուտքից սահմանակից է Արարատի մարզի Զանգակատուն համայնքին, արևելքից՝ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Չիվա բնակավայրին, հարավից՝ Նախիջևանի ինքնավար հանրապետությանը:

Ելփինը ահմանամերձ բնակավայր է: Ելփին գյուղը վերաբնակեցվել է 1828թ. ռուս-պարսկական պատերազմից հետո, պատմական Հայաստանի Սալմաստ գավառի Բրադես գյուղից տեղափոխված հայերով: Գյուղի ներկայիս անվանումն առաջացել է գյուղի տարածքում գտնվող պատմական բնակավայրի անվանման՝ Նրբույն-Նրբին-Էրփին-Ելփին ձևափոխությունից: Նրբույն գյուղի մասին կա հիշատակություն Ստեփանոս Օրբելյանի Պատմություն նահանգին Սիսական գրքում:

Բնակչությունն զբաղվում է հացահատիկի, ծխախոտի մշակությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ: Գյուղի հյուսիսում՝ Կեչուտ հանդամասի ճանապարհին, Ելփին գետի աջակողմյան մասում կա հանգստյան գոտի՝ փոքրիկ լճակով ու գեղեցիկ տաղավարներով:

Չիվա գյուղ

Չիվա գյուղը գտնվում է Վայոց ձորի մարզի հարավ-արեմտյան մասում, Եղեգնաձոր Երևան մայրուղու վրա, Վեդի-Ներքին Արփա նախալեռնային գոտում, Ելփին գետի աջ ու ձախ ափին: Մտնում է Արենի համայնքի կազմի մեջ: Ծովի մակերևույթից բարձր է 1116 մ: Գյուղը մարզկենտրոնից ունի 23 կմ հեռավորություն, իսկ մայրաքաղաքից՝ 102 կմ: Ձմեռվա տևողությունը 4 ամիս է: Գյուղի մասին հիշատակումներ կան Ստեփանոս Օրբելյանի Սյունիքի պատմություն աշխատության մեջ՝ 13-րդ դարի թվագրությամբ: Սակայն դա սկիզբը չէ, այն ունի առավել հին պատմություն, ըստ որի գյուղն անվանվել է նաև Չվա, Չուվա և այլն: Գյուղի անունը չի ստուգաբանվում:

Չիվան հարուստ գյուղ է եղել: Չիվայի ձորը հայտնի է բազմատեսակ պտղատու այգիներով: Գյուղը վանքապատկան է եղել, այն 13-րդ դարում հատուկ հրովարտակով տրվել է Զալալ Օրբելյանին որպես կալվածք: Մետաքսի ճանապարհի մի ճյուղը Սելիմով հասնելով Արենի, մի ճյուղով էլ թեքվում էր Չիվա՝ ուղղություն վերցնելով դեպի Դվին և Այրարատ: Ենթադրվում է, որ գյուղը բնակեցված է եղել դեռևս հեթանոսական ժամանակաշրջանից: Այդ մասին են վկայում հին գյուղատեղի տարածքում հայտնաբերված կարասներով թաղումները: Գյուղը մի քանի անգամ կարճ տեղափոխումներ է ապրել, սկզբում՝ ձորամեջ, ապա՝ դիմացի սարալանջ, ուր կան քրիստոնեական վկայություններ՝ ժամտուն, խաչքարեր: Ռուս-պարսկական պատերազմից հետո այստեղ են եկել հայ գաղթականներ Խոյից, Սալմաստից: Երկար ժամանակ Չիվա գյուղում հայերի հետ ապրել են նաև այլազգիներ: 1988 թվականից գյուղն ամբողջապես դարձավ միատարր:

Բնակչության հիմնական զբաղվածությունն անասնապահությունն ու հողագործությունն է: Մշակում են՝ ծիրան, դեղձ, խաղող, բանջարաբուստանային կուլտուրաներ և հացահատիկ: Գյուղն ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, բուժկետ: Գյուղում գործում է առևտրի մի քանի կետեր:

3.3. Շահագրգիռ կողմերի ներգրավումը ՇՄՍԱԳ և իրականացման մեջ

Տարբեր կողմերի շահերի ներգրավմամբ ծրագրի սահուն իրականացումն ապահովելու, ինչպես նաև շահերի կարգավորումն ու ծրագրի իրականացման համաձայնեցված ուղու բացահայտումն ապահովելու համար մշակվելու է Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան (ՇՆՊ): Շահագրգիռ կողմերի ներգրավման նպատակն է տեղեկացնել հանրությանն ու շահագրգիռ կողմերին ծրագրի բովանդակության, նրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների, ինչպես նաև առաջարկվող մեղմացման միջոցառումների վերաբերյալ: Դա թույլ կտա բարելավել և հեշտացնել որոշումների ընդունումը և ստեղծել փոխըմբռնման մթնոլորտ, որին պետք է ակտիվ մասնակցություն ունենան ծրագրի ազդակիր անձիք և մյուս շահառուները: Նման մոտեցումը թույլ կտա այս խմբերին ապահովել բավական հնարավորություններ իրենց կարծիքներն ու մտահոգություններն ազատ արտահայտելու համար, որոնք կարող են ազդել ծրագրի շրջանակներում կայացվող որոշումների վրա: Սույն ՇՆՊ-ն պետք է հասկացվի որպես նախնական ուղեցույց ծրագրի տարբեր փուլերում շահառուների ներգրավվածությունը կառավարելու և դյուրացնելու համար՝ սկսած նախագծումից, մինչև կառուցում ու շահագործում: ՇՆՊ-ն պետք է համախմբի ծրագրում ընդգրկված բոլոր հաստատություններն ու շահագրգիռ կողմերը և ապահովի նրանց հնարավորությունն արտահայտելու իրենց կարծիքը նախագծին առնչվող շրջակա միջավայրի վրա ազդեցությունների և մեղմացման միջոցառումների վերաբերյալ: Սույն ՇՆՊ-ն ուղղված է սահմանելու Ծրագրի հետ կապված տեղեկատվության փոխանցման, խորհրդատվության և լուսաբանման մոտեցումը տեխնիկական և մշակութային տեսանկյունից: Այն գործիք է կառավարելու համար պատվիրատուի և շահագրգիռ կողմերի միջև կապը, իսկ շահագրգիռ կողմերի հետ խորհրդատվությունն ու մասնակցությունն իր հերթին բարձրացնում է ծրագրի կայունությունը և նպաստում նրա հաջող իրականացմանը: Որպես ՇՆՊ-ի անբաժանելի մաս՝ անհրաժեշտ է իրականացնել նպատակային և թափանցիկ հանրային խորհրդատվություն ազդակիր համայնքների հետ և ապահովել տեղեկատվության ժամանակին և համապատասխան ձևով տրամադրումը: Պետք է լինի գրավոր ապացույց և հանդիպման արձանագրություններ ու փաստաթղթեր, որոնք

կվկայեն, որ արտահայտված տեսակետները հաշվի են առնվել: Տեղեկատվության տրամադրման, հանրությանը իրազեկելու, հանրային լուսմների, խորհրդատվության և մասնակցության պահանջները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ՎՋԵԲ-ի, ԵՄ-ի ու միջազգային դոնոր կազմակերպությունների ուղեցույցներին, բնապահպանական և սոցիալական ստանդարտներին: Սպասվում է, որ քննարկվող հարցերը հիմնականում կառնչվեն աշխատանքների իրականացման մանրամասներին՝ բնապահպանական, զբաղվածության, առողջության և աշխատանքի անվտանգության, հողերի ձեռքբերման և փոխհատուցման, ինչպես նաև մշակութային ժառանգության պահպանման կանոնակարգերին ու ստանդարտներին: Սակայն հնարավոր են նաև այնպիսի նախագծային հարցեր, որոնք վերաբերում են օրինակ՝ ջրամբարի գտնվելու վայրին, համակարգի հզորությանը, ճանապարհային ծածկույթի չափանիշերին և այլն: Ծրագրի ողջ ընթացքում անհրաժեշտ ներգրավման աշխատանքներն արտացոլելու նպատակով ՇՆՊ-ն պետք է պարբերաբար թարմացվի, որը նախատեսվում է իրականացնել ըստ Ծրագրի առաջադրանքի և/կամ ըստ անհրաժեշտության: Բնապահպանական և սոցիալական գործունեության վերաբերյալ ազդակիր համայնքների մտահոգություններն ու դժգոհությունները ստանալու և դրանց լուծմանը նպաստելու նպատակով ծրագիրը ներառում է նաև շահագրգիռ կողմերի համար Բողոքարկման մեխանիզմի կիրառում: Դա թույլ կտա հանրությանը պատվիրատուի (ինչպես նաև Խորհրդատուի և Կապալառուի) ուշադրության տակ պահել ծրագրի հետ կապված բոլոր մտահոգությունները:

3.3.1. Շահագրգիռ կողմերի ներգրավմանը և հանրային խորհրդատվությանը ներկայացվող ՎՋԵԲ-ի, ԵՆԲ-ի և ԵՄ ՀՆԳ-ի պահանջները

Շահագրգիռ կողմերի ներգրավման և հանրային խորհրդատվությանը ներկայացվող ՎՋԵԲ-ի, ԵՆԲ-ի և ԵՄ ՀՆԳ-ի պահանջները ներկայացված են հետևյալ միջազգային փաստաթղթերում.

- ՎՋԵԲ-ի Կատարողական պահանջներ (2019թ.)
- ԵՆԲ-ի Բնապահպանական և Սոցիալական Ստանդարտների և Սկզբունքների Կայունության Ուղեցույց (2018թ.) (Եվրամիություն, 2011թ.),
- KfW Կայունության Ուղեցույց (2022) (KfW զարգացման բանկ, 2022 թ.),

- ՄՖԿ Համաշխարհային Բանկի Խմբի Ընդհանուր Բնապահպանական, Առողջության և Անվտանգության (ԲԱԱ) Ուղեցույց (2007) (Համաշխարհային Բանկի Խումբ, 2007 թ.),

- Առողջության և Անվտանգության ուղեցույցները (Համաշխարհային Բանկի Խումբ, 2007 թ.):

ՎԶԵԲ-ը պահանջում է շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի (ՇՆՊ) մշակում՝ նպատակ ունենալով ծրագրի բոլոր շահառուների ներկայացում և պատշաճ ձևով հասցեագրում ողջ խորհրդատվության գործընթացում և բողոքարկման մեխանիզմների առկայությունը ծրագրի համար: ՎԶԵԲ-ի, ԵՆԲ-ի Բ կատեգորայի ծրագրերի Շահագրգիռ կողմերի ներգրավման համար սկզբունքներն ու պահանջները մանրամասն նկարագրված են հետևյալ փաստաթղթերում՝ ՎԶԵԲ-ի Կատարողականի պահանջներ (2019) և համապատասխան Ուղեցույցներ, Բնապահպանական և Սոցիալական Ձեռնարկ 2013թ. (ԵՆԲ): Տվյալ ֆինանսական հաստատությունների ընդհանուր սկզբունքներն ու մոտեցումները հանրային ներգրավման նկատմամբ միավորված են և ուրվագծում են Շահագրգիռ կողմերի ներգրավման համակարգված մոտեցում, որը կօգնի պատվիրատուներին կառուցել և պահպանել կառուցողական հարաբերություններ իրենց շահագրգիռ կողմերի և մասնավորապես ազդակիր համայնքների հետ: Ըստ բանկերի քաղաքականության՝ շահագրգիռ կողմերի ներգրավումը շարունակական գործընթաց է, որը ներառում է նախատեսված միջոցառումների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն (թե՛ դրական, թե՛ բացասական), ինչպես նաև դրանց հետ կապված սոցիալական և բնապահպանական հարցերի ու մեղմացման միջոցառումների հրապարակում, որպեսզի հնարավոր լինի շահագրգիռ կողմերի և պոտենցիալ ազդակիր կողմերի հետ ունենալ նպատակային խորհրդակցություն: Տեղեկատվությունը պետք է տրամադրվի հասկանալի կերպով և ժամանակին, պետք է մատչելի լինի շահագրգիռ կողմերի համար: Այս գործընթացը պետք է սկսվի ծրագրի պլանավորման ամենավաղ փուլում և շարունակվի նրա ամբողջ ընթացքում: Քննարկումները /խորհրդատվությունները պետք է անցկացվեն ազատ մթնոլորտում, որպեսզի հնարավոր լինի որոշումների կայացման մեջ ընդգրկել ազդակիր անձանց և այլ շահագրգիռ կողմերի բոլոր տեսակետները, ինչպիսիք են ծրագրի նախագծումը, մեղմացնող միջոցառումները, ծրագրի մշակման օգուտների և հնարավորությունների փոխանակում, ինչպես նաև աշխատանքների իրականացման հարցեր: Շահագրգիռ կողմերի ներգրավման հաջողությունը ապահովելու համար ծրագրի իրականացման մարմինը պարտավոր է պարզել ծրագրի շահառուներին, հատկապես նրանց, ովքեր անմիջական ազդեցության կրողներն են: Բացի այդ, շահագրգիռ կողմերին պետք է

առաջարկվի ընթացակարգ, որով նրանք կարող են մեկնաբանություններ անել կամ բողոքել:

3.3.2. Շահագրգիռ կողմերի ներգրավմանը /հանրային քննարկումներին ներկայացվող ազգային պահանջներ

Ի տարբերություն միջազգային պահանջների, ՀՀ օրենսդրությամբ Շահագրգիռ կողմերի Ներգրավման Պլան չի պահանջվում: Սակայն այս ուղղությամբ հարկ է նշել, որ 2001թ. Հայաստանը վավերացրել է «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիան (ՄԱԿ ԵՏՀ, Օրհուս, 1998թ.): Կոնվենցիան նախատեսված է բարելավել յուրաքանչյուր մարդու մասնակցությունը շրջակա միջավայրի հարցերի կառավարման և որոշումների կայացման գործընթացին, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի տեղեկացված լինելու շրջակա միջավայրի հետ կապված հարցերին: Հանրային քննարկումների պլանավորումը և կազմակերպումը կատարվելու է ուղորդվելով ՄԱԿ ԵՏՀ Օրհուսի կոնվենցիայի դրույթներով:

Հանրությանը իրազեկելու, հանրային լսումների և մասնակցության պահանջները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրության, ՎՋԵԲ PR10-ի և ՎՋԵԲ-ի բնապահպանական և հանրային տեղեկատվության քաղաքականության պահանջներին, ինչպես նաև ԵՆԲ-ի կողմից սահմանված շրջակա միջավայրի և սոցիալական ստանդարտներին և Ուղեցույցներին: Հանրային քննարկումների գործընթացում պետք է նաև հաշվի առնել ցանկացած այլ համապատասխան պահանջ (օրինակ՝ տվյալ երկրի ՇՄԱԳ ընթացակարգը, Անդրսահմանային համատեքստում ՇՄՍԱԳ-ի մասին կոնվենցիան՝ «Էսպոյի կոնվենցիա») և Օրհուսի կոնվենցիան:

Բնապահպանական տեղեկատվության բացահայտումը հանդիսանում է հանրային մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ կառավարական գերատեսչությունների պատասխանատվությունը: Հանրային խորհրդատվության և քննարկումների վերաբերյալ ՀՀ իրավական և կարգավորիչ դաշտը հիմնված է հետևյալ հիմնական օրենքների վրա.

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, որը պահանջում է հանրային մասնակցություն որոշումների կայացման գործընթացում:

- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, որն ապահովում է ՀՀ քաղաքացիների իրավունքը տեղեկացված լինելու իրենց վրա ազդեցություն ունեցող հարցերի մասին և արտահայտելու իրենց մտահոգությունները որոշում կայացնողներին:

2014 թ. ընդունված և 2023 թ. փոփոխված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (ՇՄԱԳ օրենք) նախատեսում է շահագրգիռ կողմերի ներգրավմանն առնչվող նորմատիվ պահանջները: Այն պարունակում է տնտեսական գործունեության (ծրագրերի) ցանկը, որոնք ենթակա են բնապահպանական փորձաքննության և հանրային լսումների: Օրենքը կարգավորում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և հանրային քննարկումների/լսումների/ անցկացման իրավական, տնտեսական, ինստիտուցիոնալ և ընթացակարգային հարցերը:

Այս օրենքի համաձայն, ծրագրի նախաձեռնողները նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրությանը իրազեկելու նպատակով պարտավոր են անցկացնել հանրային քննարկումներ/լսումներ և տվյալ նախատեսվող գործունեության վերաբերյալ տրամադրել համապատասխան փաստաթղթեր:

Հանրային քննարկումների անցկացումը, հանրության իրազեկումը և տեղեկատվության տարածումն ապահովվելու է հանրային ծանուցման և քննարկումների իրականացման «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման (N-1325-Ն, 19 նոյեմբերի 2014, փոփոխված 2023 թ.) -ի համաձայն:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրությանը իրազեկելու նպատակով հանրային քննարկումները կազմակերպվում են.

1. Ջրամբարի կառուցման նախագծով նախատեսվող գործունեության վերաբերյալ ծանուցման և հանրային քննարկման կազմակերպում ազդակիր համայնքի ղեկավարի և Խորհրդատուի կողմից (նախատեսվող գործունեության ընդհանուր բնութագրի, ՇՄԱԳ արդյունքների և ԲՍԿԴ-ի ներկայացում),

2. նախատեսվող գործունեության վերաբերյալ համապատասխան որոշման ընդունման հետ կապված հանրային քննարկման կազմակերպում ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության (ՀՀ ՇՄՆ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ) կողմից:

Հանրության ծանուցումը, որը կատարվում է հանրային քննարկումների անցկացումից առնվազն 7 օր առաջ, իրականացնում են լիազորված մարմինը, ձեռնարկողը (Խորհրդատուն), ազդակիր համայնքի տարածքային կառավարման

մարմիններն ու ազդակիր համայնքների ղեկավարները: Հանրային ծանուցումն իրականացվում է զանգվածային լրատվամիջոցների, էլեկտրոնային փոստի և հայտարարությունների միջոցով: Հանրային քննարկումների արդյունքում իրականացնողը կազմում է համապատասխան արձանագրություն՝ կցելով նաև հանրային քննարկման տեսաձայնագրությունը, որը ներկայացվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությանը: Հանրային քննարկումների ընթացքում ստացված հիմնավորված դիտողություններն ու առաջարկությունները ձեռնարկողը և լիազորված մարմինը պետք է հաշվի առնեն, իսկ դրանք հաշվի չառնելու դեպքում պետք է տրվեն հիմնավոր պատճառաբանումներ և պարզաբանումներ: ՇՄՍԱԳ գործընթացի վերաբերյալ հիմնական կարևոր փաստաթղթերը հանրամատչելի են դարձվում հանրությանը՝ դրանք տեղադրվելով նաև ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության ինտերնետային էջում (<http://www.mnp.am/>):

3.3.3. *Ծրագրի հանրային խորհրդատվության և քննարկումների սկզբունքները*

Հանրային խորհրդատվությունների և քննարկումների գործընթացն ամբողջությամբ նախատեսվում է իրականացնել է ՎԶԵԲ-ի, այլ դոնորների ԲևՍ և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Մասնավորապես, ծրագրի իրականացման գործընթացում հանրային ներգրավվածության համար պետք է ձեռնարկել հետևյալ քայլերը.

- հետագա խորհրդատվությունների և քննարկումների համար Շահագրգիռ կողմերի խմբերի և նրանց մասնակցության աստիճանի որոշում, ներառյալ՝ ազդակիր համայնքները, մարդիկ և մյուս կողմերը, ովքեր կարող են հետաքրքրված լինել ծրագրով,

- յուրաքանչյուր կատեգորիայի շահառուների համար քննարկումների և խորհրդատվության մեխանիզմի մշակում՝ նրանց դիտողությունները և որոշումների կայացման գործընթացում արդյունավետ ներգրավվածությունն ապահովելու նպատակով,

- շահագրգիռ խմբերի հետ քննարկումների և խորհրդատվությունների իրականացում և նրանց ներգրավվածության պատշաճ մակարդակի ապահովում,

- բողոքների ներկայացման մեխանիզմի մշակում, որը կապահովի հանրության կողմից վեր բարձրացված մտահոգությունների և պահանջների ստացումն ու դրանց արագ և հետևողական արձագանքումը:

Համաձայն ՀՀ կանոնակարգող ընթացակարգերի, ամփոփենք սույն վերականգնման ծրագրի համար շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացը:

ՇՄՍԱԳ շրջանակային հաշվետվության պատրաստման ընթացքում հանրային քննարկումներ կանցկացվեն ՀՀ Վայոց Ձորի մարզի Արենի համայնքապետարանում և/կամ ազդակիր Ելփին բնակավայրում, որոնց ընթացքում նախատեսվում է նախագծային ընկերության մասնագետների, Ջրային կոմիտեի ներկայացուցիչների, տարածքային կառավարման մարմինների ու ՏԻՄ-երի, ԶՕԸ-ի ներկայացուցիչների, մարզային հասարակական կազմակերպությունների և ազդակիր բնակչության ակտիվ մասնակցությունը:

- հանրային քննարկումները կանցկացվեն ծրագրի ազդակիր հանրությանը և շահագրգիռ կողմերին ծանուցումից առնվազն յոթ աշխատանքային օր հետո,

- հանրային քննարկումների ընթացքում Խորհրդատուի («Քոնսեկուարդ» ՍՊԸ) ներկայացուցիչների կողմից կներկայացվեն իրականացվող գործունեության մանրամասները և հանրության կողմից վեր բարձրացված հարցերին կտրվեն պատասխաններ,

- հանրությունը կարող է ծանուցումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել նախատեսվող գործունեության վերաբերյալ իր գրավոր դիտողություններն ու առաջարկությունները,

- Խորհրդատուի («Քոնսեկուարդ» ՍՊԸ) կողմից կկազմվեն իրականացված քննարկումների վերաբերյալ արձանագրություններ, կիրականացվի հանրային քննարկումների և հանդիպումների տեսաձայնագրություններ,

- հանրային քննարկումների ընթացքում ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի կառնվեն Խորհրդատուի («Քոնսեկուարդ» ՍՊԸ) կողմից ՇՄՍԱԳ հաշվետվության պատրաստման ընթացքում և կներառվեն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության տրվող հայտում, որն այդ նպատակով կներկայացնվի ՀՀ ՇՄՆ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ («ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ),

- Խորհրդատուի կողմից նախնական գնահատման հայտը (ՇՄՍԱԳ հաշվետվություն) ՀՀ ՇՄՆ ներկայացնելուց հետո, մինչ հայտի վերաբերյալ փորձագիտական եզրակացության կայացումը, «ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի կողմից Արենի համայնքապետարանում և/կամ ազդակիր Ելփին բնակավայրում կանցկացվեն երկրորդ հանրային քննարկումները՝ այդ մասին ծանուցելով առնվազն յոթ աշխատանքային օր առաջ,

- հանրությանը ծանուցումից առնվազն յոթ աշխատանքային օր հետո «ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի համապատասխան փորձագետը՝ Խորհրդատուի, ՏԻՄ-երի և

ազդակիր Արենի համայնքի ու Ելփին վարչական ղեկավարների հետ համատեղ, Արենի համայնքապետարանում և/կամ ազդակիր Ելփին բնակավայրում կիրականացնեն հանրային քննարկումներ նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ,

➤ հանրային քննարկումների ընթացքում ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի կառնվեն նախատեսվող գործունեության համար ՀՀ ՇՄՆ-ի կողմից տրվող փորձաքննական եզրակացությունում,

➤ ՇՄՍԱԳ հայտի ուսումնասիրության արդյունքում ՀՀ ՇՄՆ-ի կողմից փորձաքննական եզրակացություն տալու վերաբերյալ որոշումը կկայացվի նախնական գնահատման հայտը ՀՀ ՇՄՆ ներկայացնելու օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում:

3.3.4. Ծրագրի շահագրգիռ կողմեր

Շահագրգիռ կողմերի արդյունավետ ներգրավվածությունն ապահովելու նպատակով, ձեռնարկողը պետք է հստակ պատկերացում ունենա, թե ովքեր են Ծրագրի շահագրգիռ կողմերը, և հատկապես ուղղակի ազդեցություն կրող կողմերը, անուղղակի ազդեցություն կրողները և խոցելի խմբերը:

Ծրագրի շահագրգիռ կողմերը սովորաբար տարբեր հաստատություններից, վարչական մարմիններից, սպասարկման տարբեր ոլորտներից, և ազդակիր բնակչությունից բաղկացած մի զանգված է: Շահառուները կարող են լինել ինչպես ներքին (օրինակ՝ նախագծային և խորհրդատվական կազմակերպությունների աշխատակիցները), այնպես էլ արտաքին (օրինակ՝ ծրագրի ազդակիր համայնքները, ՏԻՄ-երը, պետական կառավարման մարմինները, համայնքային հասարակական և մասնավոր կազմակերպությունները):

Սույն ծրագրի իրականացման գործում կարևոր դեր ունեն հետևյալ շահագրգիռ կողմերը.

Պատվիրատու

- ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտե

Իրականացնող խորհրդատու

- «Քոնսեկուարր» ՍՊԸ:

Պետական գործակալությունները

- ՇՄՆ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ («ՇՄԱՓԿ»)

Վերահսկող կողմ

- Ջրային կոմիտե,
- ՎԶԵԲ :

Խորհրդարկական կողմ

- «Մոդուլ» ՍՊԸ, Ծրագրի նախագծման խորհրդատու,
- Տեխնիկատնտեսական հիմնավորման և Տեխնիկական նախագծման Խորհրդատուներ,
- Վերաբնակեցման գործողությունների պլանի Խորհրդատու (ՎԳՊ):

Պետական մոնիտորինգ իրականացնող գործակալություններ

ՀՀ Կառավարությանը ենթակա մարմիններ

- ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին (Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն)
- Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին,
- Անհրաժեշտության դեպքում, ՀՀ ԿԳՍՄ նախարարություն (Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալություն):

Ուղղակի ազդեցություն կրող կողմեր

- ՀՀ Վայոց Ձորի մարզի Արենի համայնքի Ելփին և Չիվա բնակավայրերի ազդակիր բնակչություն,
- Օտարման ենթակա հողակտորների սեփականատերեր
- Ֆերմերներ:

Խոցելի խմբեր

- Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսություններ (SS)
- Կանանց կողմից ղեկավարվող SS-ներ
- Կենսաթոշակառուների կողմից ղեկավարվող SS-ներ
- Հաշմանդամների կողմից ղեկավարվող SS-ներ:

Այլ շահագրգիռ կողմեր

- «Եղեգնաձոր» ԶՕԸ,
- Բիզնես / մասնավոր կազմակերպություններ, ՍՊԸ-ներ,

- Քաղաքացիական/հասարակական կազմակերպություններ (Վայոց Ձորի մարզի որոշ ակտիվ ՀԿ-ների կոնտակտային տվյալները բերված են Հավելված 3-ում) և այլն:

Ծրագրի հիմնական շահագրգիռ կողմը Պատվիրատուն՝ Հայաստանի տարածքային կառավարման և ենթակայությունների նախարարության «Ջրային կոմիտեն» է (ՋԿ):

Միջազգային ներդրումները համակարգում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկը՝ ՎԶԵԲ :

«Քոնսեկուարո» ՍՊԸ Խորհրդատուն հանձն կառնի Ծրագրի ՇՄՍԱԳ իրականացնող Խորհրդատուի դերը և սերտ կապ կպահի բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Բոլոր գործողությունները սովորաբար համաձայնեցվում են ՋԿ-ի հետ:

Խորհրդատուի փորձից ելնելով՝ լավ համագործակցությունն ու աշխատանքների համակարգումը Խորհրդատուի և ծրագրի բոլոր շահագրգիռ կողմերի միջև կարևոր է ծրագրի հաջող իրականացման համար: Հետևաբար, նախատեսված է ծրագրի ընթացքում սերտ կապ պահել բոլոր շահագրգիռ կողմերի հետ:

Ծրագրի շահագրգիռ կողմերը և նրանց փոխազդեցությունը մեկնաբանվում է հաջորդ բաժնում:

3.3.5. Համակարգում

Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև համակարգումը նախատեսվում է իրականացնել Խորհրդատուի կողմից կանոնավոր հանդիպումների կազմակերպման և բոլոր շահագրգիռ կողմերի հետ փոխհամագործակցության միջոցով: Նման մոտեցումը երաշխավորում է համապատասխանությունը ծրագրի կառավարման հիմնական գործոններին.

- պարզ և արժանահավատ ռազմավարական կողմնորոշում,
- արդյունավետ կառավարման կառուցվածք,
- հստակ պատկերացում, թե ում հետ համագործակցել և ինչպես,
- առանցքային ռազմավարական գործընթացների ըմբռնում,
- անհրաժեշտության դեպքում՝ կենտրոնացում ներգրավվածների ուսուցման կարողությունների զարգացմանն աջակցելու վրա:

Խորհրդատուն («Քոնսեկուարո» ՍՊԸ)-ն իր ծառայությունների ամբողջ ընթացքում պետք է ապահովի գործողությունների համակարգումը և ակտիվ մոտեցում ցուցաբերի ՋԿ-ի հետ բոլոր փոխհարաբերություններում, ՏԻՄ-երի և մյուս շահագրգիռ կողմերի հետ աշխատանքներում: Սա ապահովում է «բաց դռների» քաղաքականության իրականացում

և շարունակական կապ շահագրգիռ կողմերի հետ՝ խթանելով թիմային աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, ծրագրի հնարավորինս բարձր որակով առաջընթացին, ինչպես նաև թույլ է տալիս ծրագրի իրականացման ընթացքում նվազագույնի հասցնել հանրային գործունեության հնարավոր ընդհատումը:

Խորհրդատուն պետք է պատշաճ որակով համակարգի հանդիպումներում ներգրավված կողմերի պահանջները, նամակագրությունը և անհատական շփումներն ու քննարկումները, անհրաժեշտության դեպքում՝ հատուկ ուշադրություն դարձնելով տարբեր շահագրգիռ կողմերի ներգրավմանը: Պետք է երաշխավորվի ընթացիկ հաղորդակցությունը պետական կառույցների հետ՝ նախատեսվող գործողությունների վերաբերյալ նրանց տեղեկացվածությունն ապահովվելու, նրանց աջակցությունն ու ծրագրի իրականացման համար պահանջվող փաստաթղթերը ձեռք բերելու համար:

Ազդակիր համայնքներում պետք է ներդրված լինի բողոքների ներկայացման ընթացակարգ, որի նպատակն է ապահովել շահագրգիռ բոլոր կողմերից մտահոգությունների ու բողոքների ժամանակին և պատշաճ ստացումը, ինչը թույլ կտա ապահովել հանրության կողմից վեր բարձրացված առաջարկների և պահանջների պատշաճ լուծում:

4. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (2014թ., վերջին փոփոխությունը՝ 2023թ.) (այսուհետ՝ Օրենք) օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության եւ նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

«Բնության հատուկ պահպանվող արածքների մասին» ՀՀ օրենքը (2006թ.) սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող

տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

➤ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը (1998թ.) սահմանում և կարգավորում է իրավական և քաղաքականության հիմքերը ՀՀ տարածքում՝ պատմամշակութային անշարժ հուշարձանների, պատմական միջավայրի պահպանության և օգտագործման համար, կանոնակարգում է պահպանության և օգտագործման իրավահարաբերությունները:

➤ ՀՀ Հողային օրենսգիրքը (2001թ.) սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպական իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

➤ «Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.) -սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

➤ «Բուսական աշխարհի մասին» (1999 թ.) ՀՀ օրենքի նպատակը բուսական աշխարհի, կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Կարգավորում է ՀՀ բույսերի պահպանության պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցության քաղաքականությունը, սահմանում է նաև էնդեմիկ և վտանգված տեսակների, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:

➤ «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի (2000 թ.) նպատակը կենդանական աշխարհի պահպանության ապահովումն է: Կարգավորում է կենդանական աշխարհի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցության քաղաքականությունը, սահմանում է էնդեմիկ և վտանգված տեսակների,

մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:

➤ «ՀՀ ջրային օրենսգիրքի» (2002թ.) նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է: Սահմանում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության պարտավորությունները, ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի մշակման կարգը, պետական ջրային կադաստրի և մոնիթորինգի, ջրային ռեսուրսների օգտագործման թույլտվություն տրամադրող համակարգերի ստեղծումը, անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործումը, ջրի որակի չափանիշները, հիդրոլոգիական կառուցվածքների շահագործման անվտանգության խնդիրները, ջրային ռեսուրսների պահպանություն և պետական վերահսկողությունը: Ապահովում է հանրության համար համապատասխան տեղեկատվության մատչելիությունը:

➤ «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը (2006թ.) և «Հայաստանի հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (21.12.2015թ.) ՀՀ օրենքը կարգավորում են Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի սահմանման և իրականացման հետ կապված հարաբերությունները, ընդգրկելով ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների գնահատականները, ջրերի նկատմամբ առաջարկը և պահանջարկը, ջրային բնագավառի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները և հեռանկարները, ելնելով ջրի սահմանափակ լինելու, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի պահպանման համար հիմնական միջոցներից մեկը հանդիսանալու, դրա մատչելիության ապահովման նախապայմաններից:

➤ «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքի (2005թ.) նպատակը մարդու բարեկեցության, հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման, տնտեսական և էկոլոգիական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ քանակի, ռեժիմի և որակի ջրային ռեսուրսների մատչելիության ապահովումն է: Սահմանում է ջրային ռեսուրսների կայուն կառավարման, օգտագործման և պահպանության գերակայությունները, ջրային ռեսուրսի հաշվառումը և գնահատումը, առաջարկի և պահանջարկի ձևավորումը, ջրավազանային կառավարման հետ կապված հարաբերությունները:

➤ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները

Կառավարության որոշումներ

➤ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-Ն և «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, անորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

➤ «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

➤ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» 2007թ. մարտի 15-ի N385-Ն որոշումը ներառում է Գեղարքունիքի մարզի պատմամշակութային հուշարձանների ցանկը:

➤ «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» թիվ 967-Ն ՀՀ կառավարության որոշումը սահմանում է ՀՀ բնության հուշարձանների ցանկը՝ համաձայն որոշման հավելվածի:

➤ «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.09.2014թ. N1059-Ա որոշումը հաստատում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը՝ համաձայն N1 հավելվածի, Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և

օգտագործման բնագավառի 2014- 2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ համաձայն N 2 հավելվածի:

- «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության եվ օգտագործման բնագավառներում ռազմավարությանը եվ գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» կառավարության 10.12.2015թ. նիստի N54 և
- ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում՝ «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- ՀՀ կառավարության 20.01.2005 թ. N 64-Ն որոշում՝ «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոճիչների մասին»:
- ՀՀ կառավարության 03.08.20232. N 1332-Ն որոշում՝ «Ջրօգտագործման թույլտվության տրամադրման, դրա ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, վերանայման, կասեցման, ուժը կորցրած ճանաչելու, դադարեցման կարգերը և ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը, հորատանցքի անձնագրերի, հորատանցքի նախագծային երկրաբանատեխնիկական կտրվածքի ձևերը հաստատելու մասին»:
- ՀՀ կառավարության 12.02.2004 թ. N 255-Ն որոշում՝ «ՀՀ տարածքում գործող ջրամբարների օգտագործման օրինակելի կանոնները հաստատելու մասին»

Աղյուսակ 3.1. ՀՀ կողմից ստորագրված և/կամ վավերացված բնապահպանական կոնվենցիաներ և արձանագրություններ

	Կոնվենցիայի կամ արձանագրության անվանումը և վայրը	Ստորագրվել է	Վավերացվել է
1.	«Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար, 1971թ.)	1993	վավերացված է ԽՍՀՄ կողմից
2.	Կենսաբազմազանության մասին կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո, 1992)	1992	31/03/1993
3.	Կենսաբանական անվտանգության մասին Կարթագենյան արձանագրություն (Կարթագենա, 2000)	2000	15/03/2004
4.	Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան (Լյու Յորք, 1992)	1992	29/03/1993
5.	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997)		27/12/2002

	Կոնվենցիայի կամ արձանագրության անվանումը և վայրը	Ստորագրվել է	Վավերացվել է
6.	Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին կոնվենցիա (Ժնև, 1979)		14/05/1996
7.	«Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո, 1991)		14/05/1996
	«Բազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև, 2003)	21/05/2003	
8.	Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցությունների մասին կոնվենցիա (Հելսինկի, 1992)		14/05/1996
	Անդրսահմանային ջրերի վրա արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործության արդյունքում պատճառած վնասի համար քաղաքացիական պատասխանատվության և փոխհատուցման մասին արձանագրություն (Կիև, 2003)	21/05/2003	
9.	Անապատացման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (Փարիզ, 1994)	1994	1997
10	«Վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա (Բազել, 1989)		26/03/1999
11	ՄԱԿ ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրիուս, 1998թ.)	1998	14/05/2001
12	«Միջազգային լճերի և անդրսահմանային ջրահոսքերի պահպանության և օգտագործման մասին» կոնվենցիա (Հելսինկի, 1992)	1999	
	«Ջրի և առողջության մասին» արձանագրություն (1999)	17/06/1999	
13	«Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ կարգի թշնամական օգտագործումը արգելելու մասին» կոնվենցիա (Ժնև, 1976թ.)		04/12/2001
14	Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենս, 2000)	14/05/2003	23/03/2004
15	«Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ, 1972թ.)		22/06/1993
16	Վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Եվրոպայի կոնվենցիա (Բեռն, 1979)	13/03/2006	
17	Հնագիտական ժառանգության պահպանության մասին Եվրոպական կոնվենցիա	18/06/2005	
18	Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին կոնվենցիա		20/03/2006
19	Ոչնչացման վտանգի տակ գտնվող վայրի կենդանական և բուսական աշխարհի տեսակների տարածման վայրերում միջազգային առևտրի մասին կոնվենցիա	1973	27/11/2010

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ելփինի ջրամբարի կառուցման համար ինժեներական հետազոտությունները կատարվել են և նախագծային լուծումները մշակվել են «Մոդուլ» ընկերության կողմից: Ստորև բերված ցուցանիշները, բնութագրերը և նախագծային լուծումները բերված են «Մոդուլ» ընկերության նախագծային փաթեթից:

5.1. Գյուղատնտեսության ոլորտի խնդիրներ

Ելփինի ջրամբարը նախատեսվում է կառուցել ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանի Ելփինի վարչական տարածքում, Արփա գետի աջափնյա վտակ Ելփին գետի վրա, 1650±1700 բացարձակ նիշերի սահմաններում:

Ծրագրի շահառու Ելփին բնակավայրը գտնվում է Վայոց ձորի մարզի հարավ-արևմտյան մասում՝ Ելփին գետի ափին, ծովի մակարդակից բարձր է 1545մ, իսկ համայնքապատկան հողատարածքները՝ 1400մ-ից մինչև 2800մ:

Ելփին բնակավայրի տնային տնտեսությունների թիվը 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 259: Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ, խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ:

Բնակավայրի հողատարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 5587,10 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 5424,87 հա: Վարելահողերը կազմում են 589,22 հա, բազմամյա տնկարկները՝ 44,05 հա, որից պտղատու այգիներ՝ 20,36 հա, խաղողի այգիներ՝ 23,69 հա: Արոտները կազմում են 3567,09 հա, խոտհարքները՝ 129,25հա: Չօգտագործվող կամ վարձակալության չտրված այլ հողատեսքերը կազմում են 1095,26 հա, որից 950,98 հա պետական, իսկ 144,28 հա համայնքային սեփականության հողեր են: Ելփին գյուղի ընդհանուր տարածքը կազմում է 118,34 հա, որից 84,05 հեկտարը տնամերձ հողերն են: Անտառային և ջրային ֆոնդի հողերը կազմում են 11,89հա, էներգետիկայի, ճանապարհների, կապի գծերի և գազատարների տակ ընկած հողերը՝ 19,90 հա, հատուկ պահպանվող տարածքները՝ 3,85 հա, արդյունաբերական և ընդերքօգտագործման նշանակության հողերը՝ 8,25 հա:

Շահառու Չիվա բնակավայրի բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ, մեղվաբուծությամբ և անասնապահությամբ:

Բնակավայրի հողատարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 3116,0 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 2619,37 հա: Վարելահողերը կազմում են 285,62 հա, բազմամյա տնկարկները (պտղատու այգիներ)՝ 22,60 հա:

Արոտները կազմում են 414,07 հա, խոտհարքները՝ 56,16հա: Չօգտագործվող կամ վարձակալության չտրված այլ հողատեսքերը կազմում են 1840,92 հա, որից 365,97 հա պետական, իսկ 1464,04հա համայնքային սեփականության հողեր են: Չիվա գյուղի ընդհանուր տարածքը կազմում է 87,53 հա, որից 68,00 հեկտարը տնամերձ հողերն են: Անտառային ֆոնդի հողերը կազմում են 383,08 հա, ջրային ֆոնդինը՝ 5,55 հա, էներգետիկայի, ճանապարհների, կապի գծերի և գազատարների տակ ընկած հողերը՝ 11,03 հա, հատուկ պահպանվող տարածքները՝ 6,14 հա, արդյունաբերական և ընդերքօգտագործման նշանակության հողերը՝ 3,29 հա:

Ելփին և Չիվա բնակավայրերի հողային ֆոնդի բաշխումն ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների ներկայացված է համառոտ՝ ստորև աղյուսակում:

Աղյուսակ 5.1.

Նպատակային նշանակությունը	Հողատեսքը, գործառնական նշանակությունը	Բնակավայրեր	
		Ելփին	Չիվա
1. Գյուղատնտեսական	վարելահող	589,22	285,62
	պտղատու այգի	20,36	22,60
	խաղողի այգի	23,69	-
	խոտհարք	129,25	56,16
	արոտ	3567,09	414,07
	այլ հողատեսքեր	1095,26	1840,92
	Ընդամենը	5424,87	2619,37
2.Բնակավայրի	բնակելի կառուցապատման	84,05	68,00
	այդ թվում՝ տնամերձ հողեր	84,05	68,00
3.Սեփականության սուբյեկտների	ՀՀ քաղաքացիների	601,40	453,47
	համայնքային	4003,46	1853,62
	պետական	982,23	808,60

Աղբյուրը՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

5.2. Ելփին և Չիվա համայնքների ոռոգման համակարգի փաստացի վիճակը

ՀՀ Վայոց ձորի մարզի Ելփին և Չիվա բնակավայրերի 150 հա գյուղատնտեսական հողատարածքների (Ելփին՝ 100հա, Չիվա՝ 50 հա) ոռոգումը ներկայումս ընդհատումներով կատարվում է Ելփինի ջրհան կայանով:

Ելփին բնակավայրի հողատարածքների մի մասը՝ 142հա, ջրառատ ամիսներին ոռոգվում է ինքնահոս եղանակով՝ Ելփին գետից սնվող, տեխնիկապես ոչ լավ վիճակում գտնվող ջրագծերով և առուններով, իսկ սակավաջուր ժամանակաշրջանում՝ մեխանիկական եղանակով:

Ինքնահոս եղանակով ջուրը ջրօգտագործողներին է տրվում համայնքների ջրբաշխների կողմից, իսկ մեխանիկական ոռոգման ջրի բաշխումը կատարվում է Եղեգնաձոր ԶՕԸ-ի ջրաբաշխների մասնակցությամբ:

Վեգետացիայի սակավաջուր ամիսներին (հուլիս-սեպտեմբեր) ջրի քանակությունը կտրուկ նվազում է և մշակաբույսերի լիարժեք ոռոգում չի իրականացվում, ինչի արդյունքում նվազում է բերքատվության մակարդակը: Միևնույն ժամանակ բնակիչները ստիպված են ջրովի վարելահողերի հիմնական տարածքներում մշակել հացազգի մշակաբույսեր՝ ցորեն գարի և այլն, որոնք կարող են ոռոգվել միայն մեկ անգամ՝ մայիսին:

Բնակավայրերում, ջրապահովվածության ներկա պայմաններում արտադրվում են տարբեր տեսակի անասնապահական և բուսաբուծական գյուղմթերքներ, այդ թվում՝ միս 80-100տոննա, կաթ 500-600 լիտր, մեղր 4-5 տոննա, ձու 250-300 հազ հատ, խաղող 1000-1200 տոննա, պտուղ 250-300 տոննա և տարբեր տեսակի բանջարեղեն:

5.3. Զրամբարի շինարարության համար պահանջվող հողատարածքները

Ելփինի ջրամբարի, պատվարի և նրա օժանդակ կառուցվածքների տակ ընկնում է 14.7 հա հողատարածք, այդ թվում ջրամբարի տակ՝ 8.5 հա:

Նախատեսվում է ջրամբարը տեղակայել Ելփին գետի միջին հոսանքի գոգահովտում, որտեղ լայնորեն տարածված են երկրորդական հասակի հրաբխածին անդեզիտային դացիտները, որոնք ծածկված են ժամանակակից հասակի այլուվիալ, էյուվիալ և դէյուվիալ առաջացումներով 5-14մ հզորությամբ:

Հունառդոդատային և դարավանդային այլուվիալ նստվածքագոյացումները

ներկայացված են ճալաքարա-կոպճային բնահողերով մինչև 30% ավագի լցանյութով մինչև 12մ հզորությամբ և պիտանի չեն գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրության համար: Նշված տարածքները սեփականաշնորհված չեն, գտնվում են Ելփին համայնքի վարչական տարածքում և նրանց օգտագործումը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ:

5.4. Մշակաբույսերի ոռոգման ջրապահանջի հաշվարկ

Ուսումնասիրվող տարածքի գյուղ.մշակաբույսերի ոռոգման ջրի պահանջարկը գնահատվել է հիմնվելով «Գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմաներն ու ռեժիմները Հայաստանի Հանրապետության ոռոգելի հողատարածքների համար» տեղեկագրի վրա, որը հաստատվել է ՀՀ տարածքային կառավարման և ՀՀ գյուղատնտեսության նախարարների՝ 2007թ. համատեղ հրամանով:

Ոռոգման ռեժիմը գյուղատնտեսական այս կամ այն մշակաբույսերի և ջրման նորմերի, ջրումների թվի և ժամկետների համակցությունն է: Այս ռեժիմները կապված են մշակաբույսերի ջրի սպառման նախապայմաններ հանդիսացող կլիմայական, բույսի տեսակի և տեղադիրքի գործոնների հետ: Տեղեկագիրն ամփոփում է գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման ռեժիմներն ըստ ռեգիոնալ գոտիների և դրանց բացարձակ բարձրությունների:

Նախագծվող ջրամբարի իշխման տակ ընկած 300հա հողերը (Ելփին՝ 250հա, Չիվա՝ 50) ներառված են Վայոց ձորի մարզում և ըստ բարձրությունների նույնականացված են հողի հետևյալ տեսակները՝ շագանակագույն և գետաողողատային, հզոր և միջին հզորության, միջակ և թեթև կավավազային հողեր, որոնք ձևավորվել են 1200-1600մ բարձրության տարածքում:

«Եղեգնաձոր» ԶՕԸ-ի ներկայացրած տվյալների համաձայն շահառու բնակավայրերի փաստացի ոռոգվող առավելագույն հողատարածքը, վերջին 5 տարիների կտրվածքով, կազմում է 219,0 հա, որից 80 հա-ը ջրվել է մեխանիկական եղանակով, ինչի համար ծախսվել է 224,6 հազ կՎտ.ժամ էլեկտրաէներգիա: Չիվա համայնքի հողերը ոռոգվում են միայն ինքնահոս եղանակով: Ոռոգվող հողատարածքների ամփոփ տվյալները ներկայացված են ստորև աղյուսակներում:

Աղյուսակ 5.2. Մշակվող մշակաբույսերի հողափարածքներն ըստ տարիների

Մշակաբույսերի տեսակը	Զբաղեցրած հողատարածքը, հա				
	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
Ելփին համայնք					
Հացահատիկ	10	10	10	12	12
Բազմամյա խոտ	7	2	2	2	2
Բանջար-բոստանային մշակաբույսեր	3	3	3	5	5
Խաղող	10	14	14	24	24
Պտղատու այգի	58	55	51	60	60
Ընդամենը	88	84	80	103	103
Զիվա համայնք					
Հացահատիկ	18	18	17	19	36
Բազմամյա խոտ	4	4	5	5	5
Բանջար-բոստանային մշակաբույսեր	6	6	5	4	5
Խաղող	10	10	21	21	26
Պտղատու այգի	64	54	44	44	44
Ընդամենը	102	92	92	93	116
Ամբողջը	190	176	172	196	219

Աղյուսակ 5.3.

Համայնքներին տրված ոռոգման ջուրն ըստ տարիների և մատակարարման եղանակի

Համայնքը	Ոռոգվող հողափարածքը, հա				
	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
Ինքնահոս					
Զիվա	102	92	92	93	116
Ելփին	20	18	10	32	23
Ընդամենը	122	110	102	125	139
Մեխանիկական (պ/կ, խ.հ)					
Զիվա	0	0	0	0	0
Ելփին	68	66	70	71	80
Ընդամենը	68	66	70	71	80
Ընդհանուր	190	176	172	196	219

Աղյուսակ 5.4. Ջրամբարի իշխման տակ ընկնող հողերի հեռանկարային կառուցվածքն ըստ մշակաբույսերի

Մշակաբույսերի տեսակը	Զբաղեցրած հողատարածքը, հա					Առավելագույնը, հա	Տեսակարար կշիռը, %	Հեռանկարային, հա	Տեսակարար կշիռը, %
	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.	2022թ.			
Զիվա համայնք									
Հացահատիկ	9	9	10	13	15	15	51,7	15	0,30
Բազմամյա խոտ	1	1	2	2	2	2	6,9	0	0,00
Բանջար-բոստանային մշ.	0	0	0	0	0	0	0,0	0	0,00
Խաղող	0	0	0	0	0	0	0,0	10	0,20
Պտղատու այգի	16	14	14	12	12	12	41,4	25	0,50
Ընդամենը Զիվայում	26	24	26	27	29	29	100,0	50	1,00
Ելփին համայնք									
Հացահատիկ	10	10	10	12	12	12	0,117	36,0	0,14
Բազմամյա խոտ	7	2	2	2	2	2	0,019	9,0	0,04
Բանջար-բոստանային մշ.	3	3	3	5	5	5	0,049	15,0	0,06
Խաղող	10	14	14	24	24	24	0,233	65,0	0,26
Պտղատու այգի	58	55	51	60	60	60	0,583	125,0	0,50
Ընդամենը Ելփինում	88	84	80	103	103	103	1,00	250	1,00
Ելփին և Զիվա համայնքներ									
Հացահատիկ	19	19	20	25	27	27	0,205	51,0	0,17
Բազմամյա խոտ	8	3	4	4	4	4	0,030	9,0	0,03
Բանջար-բոստանային մշ.	3	3	3	5	5	5	0,038	15,0	0,05
Խաղող	10	14	14	24	24	24	0,182	75,0	0,25
Պտղատու այգի	74	69	65	72	72	72	0,545	150,0	0,50
Ընդամենը	114	108	106	130	132	132	1,00	300,0	1,00

Աղյուսակ 5.5. Ծրագրում ընդգրկված Ելփին ու Չիվա համայնքների փաստացի և հեռանկարում ոռոգվող հողատարածքներն ըստ մշակաբույսերի

Հ/հ	Գյուղատնտեսական մշակաբույսի անվանումը	Նախքան ծրագրի իրականացումը		Ծրագրի իրականացումից հետո	
		Ընդամենը փաստացի ոռոգվող հողեր, հա	Տեսակարար կշիռը, %	Ընդամենը փաստացի ոռոգվող հողեր, հա	Տեսակարար կշիռը, %
1	Հացահատիկ	27	20,5	51	17,0
2	Բազմամյա խոտ	4	3,0	9	3,0
3	Բանջար-բոստանային մշ.	5	3,8	15	5,0
4	Խաղող	24	18,2	75	25,0
5	Պտուղ	72	54,5	150	50,0
Ընդամենը		132	100,0	300,0	100,0

Աղյուսակ 5.6. Տարեկան ջրապահանջի և տեսակարար ջրասպառման արդյունքները

Հ/հ	Գյուղատնտեսական մշակաբույսի անվանումը	Մշակաբույսի զբաղեցրած տարածքը		Ռոտզման նորման, մ ³ /հա	Միջին հավասարակշռված ռոտզման նորման, մ ³ /հա	Պահանջվող ջրի ծավալը, մլն. մ ³
		հեկտարներով	մասերով			
1	Հացահատիկ	51	0,17	3400	578,0	
2	Բազմամյա խոտ	9	0,03	5400	162,0	
3	Բանջար-բոստանային մշ.	15	0,05	6050	302,5	
4	Խաղող	75	0,25	5400	1350,0	
5	Պտուղ	150	0,50	2500	1250,0	
Ընդամենը նեոտո		300	1,0	22750	3643	1,093
Ընդամենը բրուտոտ, $\eta = 0,75$					4857	1,457

Ելփինի ջրամբարի կառուցմամբ ամբարվող ջրածավալով հնարավորություն է ընձեռնվում լուծել հետևյալ հիմնական խնդիրները.

- ❖ իրականացնել Ելփին և Զիվա համայնքներում ռոտզման ջրի սակավության պատճառով անմշակ մնացած նվազագույնը 168 հա հողերի ինքնահոս ռոտզում,
- ❖ օգտագործելով գործող պոմպակայանի մղման ճնշումային խողովակաշարը՝ մեխանիկական ռոտզումը վերափոխել ինքնահոսի և խնայել տարեկան առնվազն 224.5 հազ. կՎտ-ժամ էլեկտրաէներգիա:
- ❖ բարձրացնել ներկայումս ռոտզվող 132 հա հողերի ջրապահովածությունը՝ ապահովելով բույսերի բերքատվության աճ:

5.5. Ելփին գետի հոսքի ուսումնասիրություն

Ելփինի ջրամբարի նախագծման տեխնիկա-տնտեսական հիմնավորման և նախնական նախագծի մաս կազմող ջրաբանական հետազոտությունների կատարման համար անհրաժեշտ է հետազոտել ջրամբարի ջրհավաք ավազանի տարածքում, իսկ բացակայության դեպքում, նմանակ գետավազանների ուսումնասիրությունը:

Ելփին գետի վրա հիդրոմետրիկական դիտարկումներ են կատարվել 1961 թվականից Ելփին գյուղի դիտակետերում, իսկ 1969 թվականին տեղափոխվել է 1կմ ներքև և փակվել 1981թվականին (աղյուսակ 5.7.):

Աղյուսակ 5.7. Ելփին գետի ջրհավաք ավազանի տարածքում գործած ջրաչափական դիտակետ

Գետ -դիտակետ	Հեռավորությունը գետաբերանից, կմ	Գետավազանի մակերեսը, կմ²	Միջին բարձրությունը, մ	Գործելու ժամանակահատվածը		Հիդրոդիտակետի 0 -ի նիշը
				բացվել է	փակվել է	
գ.Ելփին -դ.Ելփին	14	28,9	2200	1/ I -1961	28/II -1969	-
գ.Ելփին -դ.Ելփին	13	31,5	2120	1/III - 1969	1/ I - 1981	1484,42 ք.ծ.մ.

Այսպիսով, ջրընդունիչ կետում ջրաբանական հետազոտությունների համար հիմք են հանդիսացել Հայպետհիդրոմետից ստացված (առկա-հասանելի) Ելփին գետի Ելփին դիտակետի տվյալները, ինչպես նաև Գլաձոր գետի Վերնաշեն դիտակետի տվյալները, որը Ելփինի ոչ բավարար շարքը երկարացնելու նպատակով օգտագործվել է որպես նմանակ գետ:

Ջրամբարի պատվարի նախագծային գետահատվածքում Ելփին գետի ձևաչափական տարրերը բնորոշվում են հետևյալ մեծություններով.

Աղյուսակ 5.8. Ելփին գետի ձևաչափական տարրերը պատվարի գեոտեխնիկական հատվածքում

Գետի երկարությունը L, կմ	Ջրհավաք մակերեսը, F, կմ²	Ակունքի նիշը, մ	Հաշվարկային հատվածքի նիշը, մ	Միջին բարձրությունը, մ	Հունի թեքությունը, %	Լանջերի թեքությունը
6,8	15,9	2600	1660	2178	138	380

Ջրամբարի հայելու մակերեսից գոլորշիացման ծավալը որոշելու համար օգտագործվել են Երևան «Ագրո» (բարձրությունը՝ 942 մետր) և «Մարտունի» (բարձրությունը՝ 1943 մետր) օդերևութաբանական կայանների ջրային մակերևույթից գոլորշացման վերաբերյալ 2002-2022թթ. տվյալներ, քանի որ Ելփինի ջրամբարին մոտակա ոչ մի օդերևութաբանական կայանում նման չափումներ չեն իրականացվել:

Օդերևութաբանական կայանների տվյալներից երևում է, որ ջրային մակերևույթից գոլորշացումն սկսվում է մայիս ամսին և ավարտվում հոկտեմբերին: Երևան «Ագրո» օդերևութաբանական կայանում միջին տարեկան գումարային

գոլորշիացումը կազմում է 1475,6 մմ, իսկ Մարտունի օդ. կայնում՝ 676մմ: Երկու կայանների բարձրությունների և միջին տարեկան գումարային գոլորշիացման տվյալների գծային կապի միջոցով որոշվել է Ելփինի ջրամբարի ՆԴՄ-ում՝ 1691մ բարձրության վրա, գումարային գոլորշիացման չափը, որը կազմում է 1045 մմ:

Հաշվի առնելով օդերևութաբանական կայաններում ջրային մակերևույթից կատարվող գոլորշացման ներտարեկան բաշխումը, Ելփին ջրամբարի տեղամասում ևս կատարվել է համանման ներտարեկան բաշխում՝ առաջնորդվելով կայանների տվյալներով, ինչը ներկայացված է Աղյուսակ 5.9-ում:

Աղյուսակ 5.9. Ելփին ջրամբարի ջրային մակերևույթից կատարվող գոլորշացման ներտարեկան բաշխումը

Ամսական գումարային գոլորշացումը, մմ						Տարեկան գումարային
V	VI	VII	VIII	IX	X	
112.2	179.7	250.7	254.2	167.3	80.8	1045.0

Ջրի հայելու մակերեսը ՆԴՀ-ի դեպքում կազմում է 54340մ², որի դեպքում տարեկան առավելագույն գումարային գոլորշիացումը կլինի.

$$W_q = 1,045 \times 54340 = 57000 \text{ մ}^3:$$

Աղյուսակ 5.10. Ելփին ջրամբարի գետահատվածքում 25%, 50%, 75% և 95% ապահովվածության ելքերը (մ³/վ) 2100 թվականին, կլիմայի փոփոխության տարրեր սցենարների դեպքում

P	Ելք, մ ³ /վ	CCSM4 RCP6.0 սցենար 19.8% նվազում	CCSM4 RCP8.5 սցենար 33.7% նվազում	METRAS RCP8.5 սցենար 39% նվազում
25%	0.24	0.19	0.16	0.15
50%	0.16	0.13	0.11	0.10
75%	0.10	0.08	0.07	0.06
95%	0.05	0.04	0.03	0.03

Այսպիսով, ելնելով Ելփին ջրամբարի գետահատվածքում հոսքի նորմայի հաշվարկային արժեքից, 50% ապահովվածությամբ ելքերով տարիների դեպքում գումարային հոսքի ծավալը կարող է հասնել 5.407մլն. մ³-ի, 75% ապահովվածությամբ ելքերով տարիների դեպքում՝ 3.21 մլն. մ³, իսկ 95% ապահովվածությամբ խիստ սակավաջուր տարիների դեպքում՝ 1.69 մլն. մ³:

Առավելագույն ելքի հաշվարկ

Ելփինի ջրամբարի առավելագույն ելքերի հիդրոլոգիական հաշվարկների համար հիմք է հանդիսացել Ելփին դիտակետի դիտարկումների շարքը: Առավելագույն ելքերի դեպքում հնարավոր չի եղել կապի գրաֆիկի հիման վրա վերականգնել Ելփին դիտակետի տվյալների շարքը Գլաձոր գետի Վերնաշեն դիտակետի տվյալներով, քանի որ երկու շարքերի միջև առկա կապը չի բավարարել ՄՆԻՊ-ով ներկայացված պայմաններին:

Ելփին դիտակետում առավելագույն ելքերը գրանցված են 1961-ից մինչ 1980 թվականը և հաշվարկների համար օգտագործվել է 20 տարվա տվյալների շարք: Գրանցված առավելագույն ելքը եղել է $26,7 \text{ մ}^3/\text{վ}$ (1962 թ. հունիսի 4-ին), ամենափոքրը՝ $0,81 \text{ մ}^3/\text{վ}$ (1961 թ. հունիսի 30-ին): Միջինում առավելագույն ելքը կազմում է $8,17 \text{ մ}^3/\text{վ}$, փոփոխականության գործակիցը (C_v)՝ 0,89, իսկ վարիացիայի գործակիցը (C_s)՝ 1,3:

Նվազագույն ելքի հաշվարկ

Ջրամբարի պատվարի տեղամասում նվազագույն ելքերի հիդրոլոգիական հաշվարկը ևս կատարվել է Ելփին դիտակետի դիտարկումների շարք հիման վրա: Նվազագույն ելքերի բնութագրիչներից ուսումնասիրվել են միայն միջին ամսական ելքերը:

Ելփին դիտակետում նվազագույն ելքի միջին արժեքը $0,036 \text{ մ}^3/\text{վ}$, վարիացիայի գործակիցը՝ 0,67, ասիմետրիայի գործակիցը՝ 0,74: Համաձայն ՄՆԻՊ-ի հաշվարկային է համարվում նվազագույնի 80% ապահովվածություն ունեցող ելքը: Ըստ այդմ Ելփին դիտակետում էմպիրիկ կորի հիման վրա $P_{80\%}$ ելքը ստացվում է $0,02 \text{ մ}^3/\text{վ}$, իսկ ըստ տեսական կորի՝ $0,016 \text{ մ}^3/\text{վ}$:

Աղյուսակ 5.11. Տարբեր ապահովվածության նվազագույն ամսական ելքերը Ելփին դիտակետում և պարվար գետահատվածքում

Նվազագույն ելքեր, $\text{մ}^3/\text{վ}$							
Ապահովվածությունը, P%	50%	60%	70%	75%	80%	90%	95%
Ելփին դիտակետ, $\text{մ}^3/\text{վ}$	0.034	0.028	0.022	0.019	0.016	0.010	0.006
Ջրամբարի գետահատվածք	0.026	0.021	0.017	0.015	0.012	0.007	0.004

5.6. Բնապահպանական թողք

Պատվարի տեղամասում բնապահպանական թողքը հաշվվել է համաձայն ՀՀ Կառավարության 2018 թվականի հունվարի 25-ի N57-Ն որոշման: Բնապահպանական թողքի հաշվարկի համար հիմք են հանդիսացել Գլաձոր գետի Վերնաշեն դիտակետի տվյալները:

Համաձայն որոշման յուրաքանչյուր ամսվա բնապահպանական թողքը հաշվելու համար պետք է տվյալ ամսվա նվազագույն ելքի 33%-ին գումարել ձմեռային սակավաջուր սեզոնի իրար հաջորդող 10 օրերի նվազագույն ելքի միջինը: Տասնօրյակային նվազագույն ելքի ցուցանիշը Ելփին դիտակետում 0,006մ³/վ է: Պատվարի տեղամասի բնապահպանական թողքը հաշվելու համար ըստ որոշման սահմանված է K գործակից, որը գետաահատվածքների միջին տարեկան ելքերի հարաբերակցությունն է: Ելփինի ջրամբարի բնապահպանական թողքի հաշվարկային արդյունքները ներկայացված են աղյուսակ 3.3.19-ում:

Աղյուսակ 5.12. Բնապահպանական թողքը Ելփին դիտակետում և ջրամբարի գերահատվածքում

Գետահատվածք	Ամիսներ											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
դ. Ելփինի նվազագույն ելք	0.02	0.03	0.08	0.26	0.20	0.07	0.02	0.01	0.01	0.01	0.01	0.02
բնապահպանական թողք [դ. Ելփին]	0.013	0.016	0.033	0.093	0.073	0.027	0.011	0.008	0.008	0.008	0.009	0.013
բնապահպանական թողք [ջրամբար]	0.010	0.012	0.025	0.071	0.055	0.021	0.008	0.007	0.007	0.007	0.007	0.010

Այսպիսով, Ելփինի պատվարի տեղամասում նվազագույն բնապահպանական թողքը պետք է լինի 7լ/վ օգոստոսից նոյեմբեր ամիսներին, իսկ առավելագույնը ապրիլին՝ 71լ/վ:

5.7. Եզրակացություններ

Ելփինի ջրամբարի պատվարի տեղամասում Ելփին գետի ջրհավաք ավազանի ջրաբանական հետազոտության արդյունքում հնարավոր է կատարել հետևյալ ընդհանրացումները և եզրահանգումները.

- ✓ Հիդրոլոգիական հաշվարկների համար հիմք է հանդիսացել Ելփին գետի Ելփին դիտակետի դիտարկումների շարքը, քանի որ այն գտնվում է ջրամբարի պատվարի տեղամասից մի փոքր ներքև: Ամբողջական դիտարկումների շարքը կազմում է 11 տարի:

- ✓ Ջրամբարի տեղամասում հիդրոլոգիական հաշվարկների կատարման համար որպես նմանակ գետ վերցվել է Գլաձոր գետը, որը Վերնաշեն դիտակետում ունի 58 տարվա դիտարկումների շարք:
- ✓ Պատվարի տեղամասում Ելփին գետի 50% 75% և 95% ապահովվածության տարեկան հոսքի ծավալները կազմում են համապատասխանաբար՝ 5,41մլն.մ³, 3,21մլն.մ³ և 1,69մլն.մ³:
- ✓ Ըստ կլիմայի փոփոխության հավանական սցենարների մինչև 2100 թվականը գետային հոսքը կարող է նվազել համապատասխանաբար 19,8% (CCSM4 RCP6.0 սցենար), 33.7% (CCSM4 RCP8.5 սցենար) և 39% (METRAS RCP8.5 սցենար):
- ✓ Ելփին գետի տարեկան հոսքի $\approx$ 83% անցնում է գարնանային վարարումների սեզոնին:
- ✓ Հաշվարկային առավելագույն ելքը 0,1% ապահովվածության դեպքում կազմում է 32,5մ³/վ ըստ ՍՆԻՊ-ի և 32,9մ³/վ՝ ըստ ICOLD ստանդարտի:
- ✓ Պատվարի տեղամասում նվազագույն բնապահպանական թողքը կազմում է 7 լ/վ օգոստոսից-նոյեմբեր ամսներին, իսկ առավելագույնը ապրիլին՝ 71 լ/վ:
- ✓ Ջրաբերուկների տարեկան հոսքի ծավալը 50% ապահովվածության դեպքում կազմում է 1573 մ³, իսկ ջրամբարի մեռյալ ծավալը՝ 120000 մ³:

6. ՋՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

6.1. Ներածություն

Վայոց ձորի մարզում Ելփին և Չիվա համայնքների 300հա գյուղատնտեսական հողատարածքների ոռոգման համար նախագծվող ջրամբարի ջրատնտեսական հիմնավորումների ելակետային տվյալներ են հանդիսացել.

- մշակաբույսերի ոռոգման ջրապահանջի հաշվարկի արդյունքները,
- Ելփին գետի հիդրոլոգիական տվյալները,
- Ելփին գետում բնապահպանական թողքերը,
- գոլորշիացման և ֆիլտրացիայի գումարային ջրակորուստները ջրամբարից:

Գետի ազատ հոսքը կարգավորելու համար անհրաժեշտ է՝

- որոշել ոռոգման համար ջրամբարից վերցվող ջրի ամենամսյա ծավալները,

- ունենալով ջրամբարից տեղի ունեցող ամենամսյա ջրակորուստները, որոշել ջրամբարի օգտակար ծավալը,
- կառուցել ջրամբարի տեղագրական բնութագրերը,
- գետի կոշտ հոսքի հիման վրա որոշել ջրամբարի մեռյալ ծավալը և դրան համապատասխան հորիզոնը ջրամբարում:

Գյուղատնտեսական կուլտուրաների կայուն և հուսալի ոռոգում ապահովելու համար նախագծվող Ելփինի ջրամբարի ջրատնտեսական հաշվարկներն իրականացվել են մթնոլորտային տեղումների 50% և 75% ապահովվածության և պատվարի ուղղահաստվածքում Ելփին գետի հոսքի ներտարեկան բաշխման 50% և 75% ապահովվածության տարիների տվյալներով: Գետի 75% հոսքի ներտարեկան բաշխումն ընտրվել է տվյալ ապահովվածությամբ ելքին մոտ տարիների (մինչև 5% շեղման գոտի) յուրաքանչյուր ամսվա միջին արժեքների հիման վրա Գետի ազատ հոսքի մեծությունը պատվարի ուղղահաստվածքում ստացվում է գետի բնական հոսքից հանելով ոռոգման ջրապահանջը և գումարային ջրակորուստները: Զրահոսքը բաշխվում է այնպես, որ ոռոգման սեզոնի վերջում ջրամբարում մնա մեռյալ ծավալից ոչ քիչ ջուր:

300հա հողատարածքների ոռոգման համար պահանջվող ջրի տարեկան ծավալը կազմում է 1,446մլն. մ³, որից 0,644մլն. մ³ ծածկվում է ջրամբարից, իսկ 0,802 մլն.մ³-ը՝ գետից:

Այս դեպքում ջրամբարի լրիվ ծավալը ստացվում է 0,920 մլն.մ³, իսկ օգտակարը՝ 0,800 մլն.մ³:

6.2. Եզրակացություն և առաջարկություններ

Քանի որ ծրագրում ընդգրկված Չիվա համայնքի 50հա հողերը և Ելփին համայնքի հողերի մոտ 10% -ը ներկայումս ոռոգվում են ինքնահոս եղանակով, ինչպես նաև Հերմոն-Ելփին ջրատարի վրա կառուցված Ելփինի պոմպակայանը թողնվելու է որպես ռեզերվային, իսկ այդ պոմպակայանով Ելփին համայնքին մատակարարվող 90լ/վ ջուրն ուղղվելու է Ռինդ համայնքի ոռոգելի հողատարածքների ջրապահովվածության բարձրացմանը, ապա, որպես նախագծային, առաջարկվում է կառուցել նվազագույնը 920հազ.մ³ ընդհանուր ծավալով ջրամբար, ինչն ամբողջությամբ կապահովի մթնոլորտային տեղումների 50% և գետահոսքի ներտարեկան բաշխման 75% ապահովվածության տարիների ջրապահանջը: Սակավաջուր տարիներին Չիվա համայնքի 15հա հացահատիկի, 25հա պտղատու և

10հա խաղողի այգիներին, ինչպես նաև Ելփինի 9հա բազմամյա խոտորոյսերի հողատարածքներին ջրամբարից ջուր չհատկացնել, ոռոգումն իրականացնել նախկին ինքնահոս եղանակով կամ անհրաժեշտ չափով դոտացիա ստանալ Ելփինի պոմպակայանից:

Ոռոգման նման սխեմայի դեպքում կունենանք հետևյալ պատկերը.

Աղյուսակ 6.1.Սակավաջուր տարիներին ջրամբարից ինքնահոս ոռոգվող հողատարածքներն ըստ մշակաբույսերի

Հ/հ	Գյուղատնտեսական մշակաբույսի անվանումը	Ընդամենը ոռոգվող հողեր, հա	Տեսակարար կշիռը, %
1	Հացահատիկ	36	14,9
2	Բազմամյա խոտ	0	0,0
3	Բանջար-բոստանային մշ.	15	6,2
4	Խաղող	65	27,0
5	Պտուղ	125	51,9
Ընդամենը		241	100,0

7. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

7.1. Զրոյական տարբերակ

Զրոյական տարբերակ՝ նշանակում է, որ նախագիծը չի իրականացվում: Եթե Ելփինի ջրամբարը չի կառուցվում, ապա տարածքը չի ենթարկվի նախատեսված գործունեության հետևանք հանդիսացող ազդեցությունների և առկա բնապահպանական և սոցիալական պայմանները չեն փոխվի:

Միևնույն ժամանակ գյուղատնտեսական հողերի ոռոգումը կմնա անբավարար և անարդյունավետ, չի բարձրանա ջրային անկախությունը:

7.2. Քննարկվող տարբերակները

Ներկայացվող ծրագիրը իրականացվում ՀՀ կառավարության քաղաքականության և որոշմենի հիման վրա, ուստի քննարկվել են ջրամբարի ցուցանիշների և կառուցման եղանակների տարբերակները:

Ինչպես վերը նշվել է Ելփինի ջրամբարը նախատեսվում է կառուցել ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանի Ելփին համայնքի վարչական տարածքում, Արփա գետի աջափնյա վտակ Ելփին գետի վրա, 1650÷1700 բացարձակ նիշերի սահմաններում: Ջրամբարը ծառայելու է գետի հեղեղային ելքերը կուտակելու և սակավաջուր ամիսներին ՀՀ Վայոց ձորի մարզի Ելփին և Չիվա համայնքների 300հա գյուղատնտեսական հողատարածքների կայուն ոռոգում իրականացնելու համար:

Ջրամբարի հիմնական հիդրոտեխնիկական կառույցը՝ պատվարն է:

Դիտարկվել է պատվարի կառուցման երկու տարբերակ՝

1-ին տարբերակ - քարահողային պատվար (կոպճա-ճալաքարային բնահողից), կենտրոնական ավազակավե միջուկով:


2-րդ տարբերակ - քարահողային պատվար ավազակավե էկրանով:

Երկու տարբերակների համար կազմվել է նախնական խոշորացված նախահաշիվ: 1-ին տարբերակի դեպքում ջրահամակարգի կառուցման շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքը կազմել է մոտ 2,968մլրդ.դրամ, իսկ 2-րդ դեպքում՝ մոտ 3,091 մլրդ. դրամ:

Յուրաքանչյուր տարբերակի համար կատարվել են տնտեսական նպատակահարմարության հաշվարկներ և ստացված ցուցիչների ամփոփման արդյունքում որպես նախագծային ընտրվել է 1-ին տարբերակը:

Ստորև բերված են պատվարի քննարկվող տարբերակների կտրվածքների պատկերները:

Նկար 12. Պատվարի տարբերակները



Ելքինի ջրամբարի շինարարության խոշորացված արժեքներն ըստ տարբերակների

Հ/Հ	Կառուցվածքի անվանումը	Արժեքը, մլն. Դրամ	
		1-ին տարբերակ	2-րդ տարբերակ
		քարահողային, ավազակավե միջուկով	քարահողային, ավազակավե էկրանով
1	Պատվար և ջրամբարի թաս	1227,0	1295,0
2	Շինարարական-ռոտզման ջրթող	250,0	260,0
3	Հեղեղային ջրիեռ	170,0	170,0
4	Մայր ջրագիծ	149,7	149,7
5	Մոտեցնող ճանապարհ, 2,5կմ	60,0	60,0
5	Չափիչ-հսկիչ սարքավորումներ	5,0	5,0

6	Ծառայողական տնակ	12,0	12,0
7	Էլեկտրամատակարարում	14,0	14,0
	Ընդամենը	1887,65	1965,65
	Ժամանակավոր շենքեր և կառույցներ, 3%	56,6	59,0
	Ձմեռային ծախսեր, 1,6%	30,2	31,5
	Տեխնիկական հսկողություն, 1,2%	75,5	78,6
	Հեղինակային հսկողություն, 0,4%	11,3	11,8
	Ընդամենը	2061,3	2146,5
	Չնախատեսված ծախսեր, 20%	412,3	429,3
	Ընդամենը	2473,6	2575,8
	ԱԱՀ 20%	494,7	514,9
	Ընդամենը ըստ ամփոփ նախահաշվի	2968,3	3090,7

8. ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ջրամբարի առաջարկվող տարածքը, կորորդինատները ըստ ազգային գեոդեզիական կորորդինատների համակարգի և ակտիվ ֆայլը բերված են ստորև.






Նկար 13. Զրամբարի տարածքը կոորդինատների նշումով

Աղյուսակ 8.1. Ջրամբարի ջրածածկման տարածքի կորդինատները՝ ARM WGS-84 կորդինատային համակարգով:

Հ/Հ	X [մ]	Y [մ]
1	4410149.3995	8511073.3926
2	4410290.9629	8510999.3030
3	4410293.2190	8511003.3632
4	4410364.5390	8511175.3409
5	4410427.5964	8511171.5827
6	4410425.7712	8511328.6592
7	4410518.0218	8511550.6274
8	4410511.0280	8511554.7917
9	4410447.9885	8511506.9316
10	4410353.4352	8511361.2647
11	4410278.8222	8511299.2016
12	4410149.5337	8511188.6619
13	4410213.8124	8511204.0691
14	4410185.4731	8511147.4916

Ջրամբարի պատվարային հիդրոհանգույցը (գծանկար 14) բաղկացած է լինելու.

1. Պատվարից
2. Հեղեղային ջրհեռից,
3. Շինարարական ջրհեռից,
4. Ոռոգման ջրթողից:



Նկար 14. Ջրամբարի հատակագիծը

8.1. Պատվար

Պատվարի ուղղահաստվածքն ընտրվել է մի շարք նկատառումներից ելնելով՝

- ջրի անհրաժեշտ ծավալով թասի ստեղծում,
- համեմատաբար կարճ երկարության կատարով պատվարի առկայություն,
- ներքին բիեֆում չլայնացող գետահունի առկայություն:

Պատվարի մարմինը նախատեսվում է իրականացնել տեղական շինարարական նյութերով՝ կոպճա-ճալաքարային բնահողի պրիզմաներով:

Որպես հակաֆիլտրացիոն միջոցառում նախատեսվում է իրականացնել կենտրոնական ավազակավե միջուկ:

Որոշվել է պատվարի կատարի նիշը երկու դեպքերի՝ նորմալ դիմհարային և առավելագույն դիմհարային մակարդակների համար և ընտրվել դրանցից առավելագույնը.

$$\nabla_{\text{պ.կ.}} = 1693,0\text{մ ք.ճ.մ:}$$

Պատվարի բարձրությունը առանցքում ստացվել է 36,0 մ: Ընտրվել է վերին շեպի թեքվածքը՝ $m=2,5$, ներքին շեպինը՝ $m=2,25$, կատարի լայնությունը՝ 8,0մ, և երկարությունը 1693,0 մ նիշի վրա՝ 155մ:

Նախատեսվում է պատվարի վերին շեպն ամրացնել քարե շարվածքով, իսկ ներքին շեպը ճեմապատել կամ կատարել բազմամյա խոտացանք:

Ելնելով ֆիլտրացիոն գրադիենտի միջին կրիտիկական մեծությունից՝ ընտրվել է միջուկի նվազագույն լայնությունը՝ 3,0մ և շեպերի թեքվածքը՝ $m_0 = 0,2$: Նախատեսվում է ավազակավային միջուկը վերին և ներքին բիեֆների կողմից պաշտպանել անցումային հակաֆիլտրացիոն շերտերով:

Պատվարի ներբանում նախատեսված է ժայռային ապարների մակերեսի նախապատրաստում՝ արտահայտված կտրուկ բեկումների թեքությունների աստիճանական մեղմացումով, այն հաշվով, որ ժայռային հարակից հատվածների լծորդման անկյան մեծությունը չգերազանցի 20° -ը:

Կատարվել են պատվարի վերին և ներքին շեպերի կայունության հաշվարկներ ստատիկ և դինամիկ ուժերի ազդեցության տակ՝ նկատի ունենալով սեյսմիկ միկրոշրջանացման ուսումնասիրություններով հաստատված առավելագույն հորիզոնական արագացման արժեքը ($A_{\max} = 0,45g$):

8.2. Հեղեղային ջրիեռ

Հեղեղային ելքերի հեռացման համար նախագծվել է բաց ափային խրամուղային ջրիեռ՝ բաղկացած է 6 հիմնական մասերից՝ 1. կողային ջրթափ, 2. խրամուղի, 3. անցումային մաս, 4. ստորասրահ պատվարի կատարի տակով, 5. հեռացնող հատված (արագահոս), 6. արագահոսի ելքամաս տրամպլինի տեսքով:

Հեղեղային ջրիեռը նախագծված է 0,1% ապահովության ելքերը՝ $Q=32,5 \text{ մ}^3/\text{վ}$, ընդունելու և դեպի ներքին բիեֆ անվտանգ տեղափոխելու համար: Նախագծով այն տեղադրվում է ջրամբարի ճախ ափին՝ անմիջապես պատվարին կից: Ջրիեռն ունի 180,0մ ընդհանուր երկարություն, բաղկացած է խրամուղային ջրընդունող հատվածից, պատվարի տակով անցնող ստորասրահից, բաց հեռացնող-լծորդող հատվածից և արագահոսից:

Տրանսֆորմացիայից հետո առավելագույն ելքը կազմում է $Q_{\max}=25,9 \text{ մ}^3/\text{վ}$, ինչն էլ ընդունվել է որպես հաշվարկային:

Խրամուղային ջրհեռն իրենից ներկայացնում է գործնական պրոֆիլով կողային ջրթափ, հատակում լայնացող կտրվածքով, ե/բ կառուցվածք: Հատակի լայնությունը խրամուղու սկզբում $B_0=2,0$ մ, իսկ վերջում $B_L=5,0$ մ: Ելնելով տեղանքի պայմաններից՝ խրամուղին նախագծվել է միակողմանի ջրընդունմամբ, $L=22,0$ մ ընդհանուր ջրթափային ճակատով (2,0մ -ը սկզբնամասի դիմային պատն է: Ջրթափի շեմքի նիշն համապատասխանում է ՆԴՀ-ին՝1691,0: Խրամուղու խորությունը սկզբում $H_1=1,30$ մ է, իսկ վերջում՝ $H_2=2,70$ մ: Խրամուղու պատերը թեք են, ըստ բարձրության՝ փոփոխական հաստությամբ: Խրամուղու սկզբնամասի ձախ կողմում նախատեսված է $L=8,6$ մ երկարությամբ բետոնե խուլ դիմային պատ՝ շահագործման ճանապարհի պաստառի նիշն (1693,0) ապահովելու և ֆիլտրացիոն հոսքը այդ մասից կանխելու համար:

Խրամուղային ջրհեռը 6,0մ երկարությամբ, ուղղանկյուն կտրվածքի ե/բ անցումային հատվածի միջոցով լծորդվում է 3,0մ հաստատուն լայնությամբ և 11,0 երկարությամբ ե/բ ստորասրահի հետ: Անցումային հատվածի հատակի թեքությունը $i=0,2$ է, պատերը ուղղաձիգ են, վերևում 40սմ, իսկ ներքևում՝ 60սմ հաստությամբ:

Ստորասրահը ուղղանկյուն կտրվածքի է, սկզբի 2,0մ հատվածն ունի փոփոխական $2,5 \div 2,0$ մ, իսկ մնացած հատվածը հաստատուն 2,0մ բարձրություն: Ստորասրահի հատվածում ֆիլտրացիոն հոսքը կանխելու նպատակով պատվարի առանցքի հետ, նրա հատման մասի հիմքում, նախատեսված է 80սմ խորությամբ բետոնե ատամ: Ստորասրահի հատակն ունի 40սմ հաստություն և $i=0,02$ թեքություն, պատերն ըստ բարձրության ունեն որոշակի թեքություն՝ վերին մասում 40սմ, ներքևում 70սմ հաստություն:

Վերը նշված ու հաջորդող հատվածները միմյանցից անջատվում են ջերմանստվածաբաշխային կարերով:

Ստորասրահին հաջորդում է $L=5,0$ մ երկարությամբ, հաստատուն $B=3,0$ մ լայնությամբ և նույն $i=0,02$ թեքությամբ ե/բ հատված, որի ուղղաձիգ պատերն ունեն փոփոխական $4,8 \div 3,6$ մ բարձրություն և $30 \div 50$ սմ հաստություն: Հատակի հաստությունը 50սմ է:

Այնուհետև ջրհեռն ամբողջ երկարությամբ ուղղանկյուն կտրվածքի արագահոս է նախագծված, փոփոխական $3,0 \times 2,4$ մ մինչև $2,0 \times 1,2$ մ բետոնե պատերով, 25սմ հաստությամբ և $i=0,02 \div 0,364$ թեքության հատակով:

Արագահոսի վերջնամասը փոփոխական $B = 2,0 \div 3,0$ մ լայնությամբ հատված է, որը շեղ անկյան տակ հատվում է զառիթափի վերին մասի հետ, որտեղից ջուրը մոտ 8.0մ բարձրությունից նետվելու է դեպի գետի հուն: Գետահունը ողողումից պաշտպանելու նպատակով իրականացվելու է ձագարածն ջրծեծ հոր՝ երկարությունը $L_{\text{հոր}}=35,7$ մ, խորությունը՝ $d_{\text{հոր}} = 4,0$ մ: Հորի ձախ շեպն ամրացվում է բետոնով, իսկ հատակն ու մյուս շեպերը՝ 80սմ հաստությամբ քարալիցքով:

8.3. Շինարարական ջրհեռ

Շինարարական ջրհեռը ժամանակավոր աշխատող կառույց է: Այն ծառայում է հիդրոհանգույցի շինարարության ընթացքում գետով եկող շինարարական ելքերը ներքին բիեֆ տեղափոխելու և շինհրապարակը չոր պահելու համար: Սույն նախագծում շինարարական ելքերը հեռացվում են քառակուսի կտրվածքի (2.0×2.0 մ) $L=150.0$ մ երկարության հատակային սրահով (գալերեա): Հաշվարկները կատարվել են 10% ապահովվածության ելքերի հեռացման համար՝ $Q_{10\%}=14.07$ մ³/վրկ, որոշվել են սրահի կտրվածքի չափերը և հատակի թեքությունը:

Գետում շինարարական ելքերը դիմհարելու և դեպի հատակային գալերեա ուղղորդելու համար նախատեսվում է կառուցել վերին անջրպետ, իսկ որպեսզի գալերեայով տեղափոխված ջրերը նորից հետ չգան և չլցվեն շինհրապարակ՝ ներքին բիեֆում նախատեսվել է ստորին անջրպետ: Վերին և ստորին անջրպետները իրականացվելու են քարալիցքային բանկետների տեսքով և հետագայում մնալու են պատվարի մարմնի մեջ:

8.4. Ոռոգման ջրթող և մայր ջրագիծ

Ոռոգման նպատակով ջրամբարից $Q_{\text{ոռ}}=188.6$ լ/վրկ ջրառ կատարելու և սպառողին հասցնելու համար հատակային սրահում նախատեսվում է տեղադրել $L=150,0$ մ երկարությամբ 530×5 մմ տրամագծի պողպատե խողովակաշար: Ջրառի նվազագույն նիշն ընդունվում է մեռյալ ծավալի հորիզոնի նիշին հավասար՝ $\nabla_{\text{հատ.ջ.թ.}} = 1670.5$ մ բ.ծ.մ.:

Ջրթողի սկզբնամասում նախատեսվում է իրականացնել ե/բ ջրընդունիչ հոր՝ ծածկված մետաղական ճաղաշարով: Ջրընդունիչ հորը նստվածքներից մաքրելու նպատակով բետոնե խցանի մեջ տեղադրվում է $d=300$ մմ տրամագծի խողովակ կարգավորիչ փականով, որի վերանորոգումը (անհրաժեշտության դեպքում) իրականացվում է ջրամբարի դատարկման ժամանակ:

Ոռոգման ջրթողի շահագործումը կառավարելու նպատակով խողովակաշարի սկզբնամասում նախատեսվում է տեղադրել 2 հատ փական, իսկ վերջնամասում՝ մեկ փական ջրաչափով: Բնապահպանական ելքերը (7÷71լ/վրկ) դեպի գետ բաց թողնելու համար վերջնամասի փականից առաջ տեղադրվում է եռաբաշխիչ-անցում, d=150մմ փական՝ ջրաչափով և L≈10մ նույն տրամագծի խողովակ՝ մինչև գալերեայի ելքամաս դուրս գալը:

Երկաթբետոնե սրահից հետո՝ ոռոգման ջրթողի վերջամասից սկիզբ է առնում ոռոգման մայր ջրագիծը, որն իրականացվում է պոլիէթիլեն de500մմ(Рe100, SDR17,), PN=1.0ՄՊա խողովակներից և ընդհանուր երկարությունը կազմում է L=1870մ: Մայր ջրագծի ՆԿ8+40 նշակետում նախատեսվում է բաժանարար հոր՝ կահավորված 3 հատ 500 մմ-ոց սողնակներով, հետագայում կառուցվելիք աջ ճյուղին միանալու, ինչպես նաև վթարի դեպքում ջրաբարն արագ դատարկելու համար: Բաժանարար հոր է նախատեսվում նաև մայր ջրագծի վերջում (ՆԿ 18+70)՝ Ելփինի պոմպակայանի գոյություն ունեցող մղման խողովակաշարին միանալու համար:

Ջրամբարի և պատվարային հանգույցի հիմնական ցուցանիշները բերված են աղյուսակ 8.2-ում:

Աղյուսակ 8.2 Ելփինի ջրամբարային հիդրոհանգույցի նախնական բնութագրեր

№ №	Հիմնական բնութագրերը	Չափի միավորը	Պարամետրերը
1	2	3	4
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ			
1	Մարզը		Վայոց ձոր
2	Սնման աղբյուրը		Արփա գետի Ելփինի վտակ
3	Նախագծման տարին		2023թ.
4	Նշանակությունը		Ոռոգում
5	Պատվիրատու		Ջրային Կոմիտե
ՊԱՏՎԱՐ			
6	Տիպը		Գրունտային
7	Մարմնի նյութը		Կոպճա-ճալաքար
8	Հակաֆիլտրացիոն տարրը		Կենտրոնական ավազակավե միջուկ, ատամով
9	Պատվարի կարգը		II
10	Պատվարի կատարի նիշը	բ.ձ.մ.	1693,0
11	Հատակի նիշը	բ.ձ.մ	1657,0 մ
12	Պատվարի բարձրությունը	մ	36,0

13	Կատարի լայնությունը	մ	8,0
14	Պատվարի երկարությունը կատարով	մ	155,0
15	Վերին շեփի թեքվածքը		1:2,5
16	Ներքին շեփի թեքվածքը		1:2,25
17	Վերին շեփի ամրացումը		Քարե շարվածք
18	Ներքին շեփի ամրացումը		Ճմապատում
19	Ցամաքուրդի տիպը		Դրենաժային բանկետ
20	Պատվարի մարմնի լրիվ ծավալը	հազ.մ ³	315,0
21	Միջուկի ծավալը	հազ.մ ³	39.3
22	Հիմքի բնահողը		Ճաքճված ժայռ, Կոպճա-ճալաքարային
ՋՐԱՄԲԱՐ			
23	Տեսակը		Հունային
24	Նորմալ դիմհարային հորիզոնի (ՆԴՀ) նիշը	բ.ծ.մ	1691,0 մ
25	Առավելագույն դիմ. հորիզոնի (ԱԴՀ) նիշը	բ.ծ.մ	1691,6 մ
26	Մեռյալ ծավալի հորիզոնի (ՄՀ) նիշը	բ.ծ.մ	1670,5 մ
27	Ջրամբարի լրիվ ծավալը	հազ. մ ³	930
28	Ջրամբարի օգտակար ծավալը	հազ. մ ³	810
29	Ջրամբարի մեռյալ ծավալը	հազ. մ ³	120
30	Ջրի հայելու մակերեսը ՆԴՀ-ի դեպքում	մ ²	54340
31	Թասից հանվող գրունտի ծավալը	հազ. մ ³	168,0
ՀԵՂԵՂԱՅԻՆ ՋՐՀԵՌ			
32	Գլխամասի տեսակը		Խրամուղային
33	Ընդհանուր ծախսը	մ ³ /վրկ	32,5 (P=0,1%)
34	Ծախսը տրանսֆորմացիայից հետո	մ ³ /վրկ	25,9
35	Ջրի եղման ճակատի ընդ. երկարությունը	մ	22
36	Ջրի եռ տրակտի տեսակը		Արագահոս
37	Ջրի եռ տրակտի երկարությունը	մ	180
38	Գետահունի հետ յծորդման տեսակը		Ջրծեծ հոր
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՋՐՀԵՌ			
39	Տեսակը		Հատակային գալերեա
40	Շինարարական ելքը՝ Q _{10%}	մ ³ /վրկ	14,07
41	Ճյուղերի քանակը	հատ	1
42	Կտրվածքի չափերը	մ	2,0 x 2,0
43	Երկարություն	մ	150,0
ՈՌՈԳՄԱՆ ՋՐԹՈՂ			

44	Ջրընդունման տեսակը		Ե/ք ջրընդունիչ հոր
45	Աղբահավաք սարքավորումներ		Մետաղական ճաղաշար
46	Ջրթողի տեսակը		Պողպատե 530x5մմ խողովակ գալերեայում
47	Ջրատարի կոնստրուկցիան		Պոլիէթիլեն խողովակ, PE 500

8.5. Ջրամբարի ծավալի որոշումը

Գյուղատնտեսական կուլտուրաների կայուն և հուսալի ոռոգում ապահովելու համար նախագծվող Ելփինի ջրամբարի ջրատնտեսական հաշվարկներն իրականացվել են մթնոլորտային տեղումների 50% և 75% ապահովվածության և պատվարի ուղղահատվածքում Ելփին գետի հոսքի ներտարեկան բաշխման 50% և 75% ապահովվածության տարիների տվյալներով: Գետի 75% հոսքի ներտարեկան բաշխումն ընտրվել է տվյալ ապահովվածությամբ ելքին մոտ տարիների (մինչև 5% շեղման գոտի) յուրաքանչյուր ամսվա միջին արժեքների հիման վրա:

300հա հողատարածքների ոռոգման համար պահանջվող ջրի տարեկան ծավալը կազմում է 1.446մլն.մ³, որից 0.644մլն.մ³ ծածկվում է ջրամբարից, իսկ 0.802 մլն.մ³-ը՝ գետից:

Ջրամբարի աշխատանքը սկսվում է մեղյալ ծավալով, իսկ շարքի յուրաքանչյուր տարվա վերջին ամսում ստացած ջրամբարի ծավալը տեղափոխվում է շարքի հաջորդ տարվա առաջին ամիս և կատարվում բազմատարյա հոսքի կարգավորման հաշվեկշռային հաշվարկ:

Այս դեպքում ջրամբարի լրիվ ծավալն ստացվում է 0.920 մլն.մ³, իսկ օգտակարը՝ 0.800 մլն.մ³:

Ելնելով վերը բերվածից 300հա հողերի ոռոգման համար պահանջվող ջրի տարեկան ծավալը կկազմի 1.446մլն.մ³, որից 0.753 մլն.մ³ ծածկվում է ջրամբարից, իսկ 0.693 մլն.մ³-ը՝ գետից:

8.6. Բնապահպանական թողք

Պատվարի տեղամասում բնապահպանական թողքը հաշվվել է համաձայն ՀՀ Կառավարության 2018 թվականի հունվարի 25-ի N57-Ն որոշման:

Բնապահպանական թողքի հաշվարկի համար հիմք են հանդիսացել Գլաձոր գետի Վերնաշեն դիտակետի տվյալները:

Համաձայն որոշման յուրաքանչյուր ամսվա բնապահպանական թողքը հաշվելու համար պետք է տվյալ ամսվա նվազագույն ելքի 33%-ին գումարել ձմեռային սակավաջուր սեզոնի իրար հաջորդող 10 օրերի նվազագույն ելքի միջինը: Տասնօրյակային նվազագույն ելքի ցուցանիշը Ելփին դիտակետում $0.006 \text{մ}^3/\text{վ}$ է: Պատվարի տեղամասի բնապահպանական թողքը հաշվելու համար ըստ որոշման սահմանված է K գործակից, որը գետաահատվածքների միջին տարեկան ելքերի հարաբերակցությունն է: Ելփինի ջրամբարի բնապահպանական թողքի հաշվարկային արդյունքները ներկայացված են աղյուսակ 8.3-ում:

Աղյուսակ 8.3. Բնապահպանական թողքի արժեքները

Գետահատվածք	Ամիսներ											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Դիտակետ Ելփինի նվազագույն ելք	0.02	0.03	0.08	0.26	0.2	0.07	0.02	0.01	0.01	0.01	0.01	0.02
Բնապահպանական թողք (դ. Ելփին)	0.013	0.016	0.033	0.093	0.073	0.027	0.011	0.008	0.008	0.008	0.009	0.013
Բնապահպանական թողք [ջրամբար]	0.01	0.012	0.025	0.071	0.055	0.021	0.008	0.007	0.007	0.007	0.007	0.01

Այսպիսով, Ելփինի պատվարի տեղամասում նվազագույն բնապահպանական թողքը պետք է լինի $7 \text{լ}/\text{վ}$ օգոստոսից նոյեմբեր ամիսներին, իսկ առավելագույնը ապրիլին՝ $71 \text{լ}/\text{վ}$:

9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9.1. Բնապահպանական և սոցիալական ռիսկեր

Շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը բացահայտելու, վերլուծելու և գնահատելու նպատակով անհրաժեշտ է նույնականացնել բոլոր այն գործընթացները, սարքավորումները, օգտագործվող նյութերն ու ռեսուրսները, որոնք յուրաքանչյուրն առանձին կամ որաշակի զուգակցմամբ կարող են առաջացնել օդային և ջրային ավազաններ փասակար

նյութերի արտանետումներ և արտահոսքեր, վտանգավոր թափոններ, ինչպես նաև ազդել տարածաշրջանի կենսաբազմազանության վրա:

Մթնոլորտային արտանետումներ կառաջանան աշխատանքային նախագծի իրականացման կառուցման փուլում:

Արտանետումները ներառում են փոշու, շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում դիզ. վառելիքի այրման արգասիքները:

Փոշու կարճաժամկետ արտանետումներ կառաջանան շինարարության աշխատանքների ժամանակ, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ մթնոլորտային օդի որակի վրա և հարակից տարածքներում հանգստացողների վրա:

Շինարարական աշխատանքների ժամանակ մեքենաներում վառելիքի այրման արգասիքները որոշակի ազդեցություն կունենան տվյալ տեղանքի մթնոլորտային օդի որակի վրա, չնայած, այդ ազդեցությունն այնքան քիչ կլինի, որ հնարավոր չի լինի այն բացահայտել: Օդի նշանակալի աղտոտում չի սպասվում, եթե շինարարության պատշաճ գործելակերպ և սարքավորում կիրառվի:

Ջրային ռեսուրսների վրա կազդեն շինարարական աշխատանքների ժամանակ մակերևութային հոսքերը, ջրամբարի շահագործման ժամանակ ելփին գետի ջրերի օգտագործումը ջրամբարի լցման և գյուղատնտեսական հողերի ոռոգման նպատակով:

Տարածքի հողածածկը և բուսածածկը կվնասվի հողային աշխատանքների ժամանակ, իսկ կենդանիների մեծ մասը կփոխեն իրենց ապրելավայրերը:

Թափոններ կառաջանան շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման, շինանյութերի օգտագործման, ջրամեկուսացման աշխատանքների ընթացքում:

Աղմուկի մակարդակը կավելանա շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում:

Սոցիալական ռիսկերը կապված են հողերի կատեգորիայի փոփոխության, արոտավայրերի և վարելահողերի մակերեսների կրճատման, տնային անասունների դեպի արոտավայրեր ուղիների երկարացման կամ փոխարինման հետ և այլն:

9.2. Օդային ավազան

Փոշու արտանետումներ ջրամբարի թասի տեղանքում հողային աշխատանքների ընթացքում:

ա) Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները

առաջանում են հիմնականում լեռնային զանգվածի հանման և ավտոինքնաթափ մեքենաների բեռնման ժամանակ:

Հաշվարկները կատարված են գործող մեթոդակարգի համաձայն /15/:

$Q_1 = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6) / 3600$ գ/վրկ (բանաձև 1), որտեղ

P_1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է գրունտներում, 0.05

P_2 - 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու անոգոլում, 0.02

P_3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու միջին արագությունը, 1.0

P_4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.4 (հաշվի առնելով բնական խոնավությունը և ջրցանի հանգամանքը)

P_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.2

P_6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G - վերամշակվող լեռնային զանգվածի քանակը, տ/ժամ:

Ներկա պահին չկան ստույգ տվյալներ փորվող հանվող հողագրունտային զանգվածների վերաբերյալ, ուստի, հաշվի առնելով ջրամբարի առաջարկվող ծավալը և տեղանքի ռելիեֆի առանձնահատկությունները, հանվող հողագրունտի ծավալը ընդունվում է՝ 400,000.0 մ³:

Հողագրունտի տեսակարար կշիռը ըստ տեղեկատու գրականության՝ 1.6 տ/մ³, այստեղից քաշը՝

$$400000 \text{ մ}^3 \times 1.6 \text{ տ/մ}^3 = 640000 \text{ տ:}$$

Ջրամբարի շինարարական /հողային/ աշխատանքների տևողությունը ըստ նախնական գնահատման կկազմի՝ 315 օր, այստեղից՝

$$640000 \text{ տ} : 315 \text{ օր} : 8 \text{ ժամ/օր} = 254 \text{ տ/ժամ:}$$

$$Q_1 = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.4 \times 0.2 \times 254 \times 10^6 \times 0.5 \times 1.0)/3600 = 2.82 \text{ գ/վրկ:}$$

Արտանետումների ընդհանուր քանակը ամբողջ շինարարության ընթացքում կկազմի՝
 $2.82 \text{ գ/վրկ} \times 315 \text{ օր} \times 8 \text{ ժամ/օր} \times 3600 \text{ վրկ/ժամ} : 10^6 \text{ գ/տ} = 25.58 \text{ տ:}$

բ) Դիզելային վառելիք այրման արգասիքները

Ջրամբարի շինարարության ժամանակ նախատեսվում է օգտագործել դիզելային վառելիքով աշխատող տեխնիկական և տրանսպորտային միջոցներ:

Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են “Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման” մեթոդական հրահանգի² հիման վրա:

Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակ 9.1-ում:

Աղյուսակ 9.1. Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NOx	CH	SOU	CO	N ₂ O	CO ₂	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Դիզվառելիքի առավելագույն ծախսը շինարարության ամբողջ ընթացքում ըստ նախնական գնահատման կկազմի՝ 126.0 տ:

Վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են աղյուսակ 9.2-ում: Աղյուսակում միավորվել են ածխաջրածինները, ինչպես նաև ազոտի օքսիդները:

Աղյուսակ 9.2. Արտանետումների հաշվարկ

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումներ, գ/կգ	Արտանետումները, գ/վրկ	Արտանետումները, տ/տարի
	CO	36.4	0.5	4.58

² Մեթոդիկայում ընդունված է տրանսպորտային միջոցների դասակարգումը “Քոռ ինվեստորի օֆ եմիշոնս ին Երոփ” (այսուհետ՝ CORINAIR)՝ “Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում” մեթոդոլոգիային համապատասխան

Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CH	8.4	0.116	1.06
	NO _x	42.3	0.58	5.33
	ՊՄ	4.3	0.06	0.54

Ծծմբային անհիդրիդ

Ծծմբային անհիդրիդի (SO₂) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$$ESO_2 = 2 \sum ksb, \text{ որտեղ՝}$$

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 123 տ

$$SO_2 = 2 \times 123 \times 0.002 = 0.5 \text{ տ կամ } 0.055 \text{ գ/վրկ:}$$

Արտանետումների ամփոփ քանակները բերված են աղյուսակ 9.3-ում:

Աղյուսակ 9.3. Արտանետումների քանակները

N°	Արտանետվող նյութի անվանումը	Արտանետումները, գ/վրկ	Արտանետումները, տ/տարի
1	Անօրգանական փոշի	2.82	25.58
2	Ազոտի երկօքսիդ	0.58	5.33
3	Ածխածնի օքսիդ	0.5	4.58
4	Ածխաջրածիններ սահմանային	0.116	1.06
5	Պինդ մասնիկներ /մուր/	0.06	0.54
6	Ծծմբային անհիդրիդ	0.055	0.5

9.3. Ջրային ռեսուրսներ

Ներկայացվող ծրագրի հիմնական նպատակներից է բնական ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման ապահովումը:

Անմիջապես ջրամբարի շինարարության ընթացքում ջուրը օգտագործվելու է շինարարական հրապարակների ջրցանի, ինչպես նաև աշխատողների խմելու կենցաղային կարիքների համար:

Տեխնիկական ջրառ նախատեսվում է իրականացնել Ելփին գետից: Համապատասխան թույլտվություն ձեռք կբերվի փորձաքննական եզարակացության ստացման պարագայում:

Խմելու ջուր կարող է ներկրվել ջրատար մեքենաներով ջրոգտագործման թույլտվություն ունեցող աղբյուրներից: Համապատասխան պայմանագիրը կկնքվի աշխատանքների սկզբնական փուլում:

Տեխնիկական կարիքների ջրոգտագործում

Համաձայն նորմատիվների ջրի ծախսը 1մ^2 տարածքում փոշին նստեցնելու համար կազմում է 0.5 լիտր/ մ^2 : Փոշենստեցման մակերեսները կորոշվեն շին.կազնակերպման փուլում: Սույն հաշվետվությունում ըստ նախնական գնահատման ընթացիկ պահում ջրցանվող մակերեսները գնահատվել են $2000 - 3000$ մ^2 , օրական ջրցանի հաճախականությունը՝ 2 անգամ: Օրական ջրապահանջը կկազմի.

$$3000 \text{ մ}^2 \times 0.5 \text{ լ/մ}^2 \times 2 = 3000 \text{ լ/օր:}$$

Շինարարական աշխատանքների ամբողջ ընթացքում՝

$$315 \text{ օր} \times 3 \text{ մ}^3/\text{օր} = 945 \text{ մ}^3:$$

Փոշենստեցման ջրոգտագործումը արտահոսք չի առաջացնում:

Խմելու-փոխադրման կարիքներ

Ջրի հաշվարկային ծախսերը որոշվում են համաձայն СНиП 2.04.01-25 «Внутренний водопровод и канализация зданий», նորմերի:

Օրական մեկ բանվորին - 25 լիտր

Օրական մեկ վարչական աշխատողին - 16 լիտր

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար օրական ջրածախսը կազմում է՝

$$W_{\text{խ.տ.}} = n \times N \times T + n_1 \times N_1 \times T_1, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների թվաքանակն է՝ 10 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ $0.016 \text{ մ}^3/\text{օր}/\text{մարդ}$

T – ԻՏ աշխատողների տարեկան օրերի թիվը, 315

n_1 – բանվորների թվաքանակն է (օրական)՝ 40 մարդ,

N_1 - բանվորների ջրածախսի նորմատիվն է՝ $0.025 \text{ մ}^3/\text{օր}/\text{մարդ}$

T_1 - աշխատանքային օրերի թիվն է՝ 315 օր

$W_{\text{խ.տ.}} = 10 \times 0.016 \times 315 + 40 \times 0.025 \times 315 = 365.4 \text{ մ}^3/\text{տարի}$:

Միջին օրական՝ $1.16 \text{ մ}^3/\text{օր}$:

Կեղտաջրերի հաշվարկ

Փոշենստեցման և հանքազանգվածի խոնավացման ջրօգտագործումը դասվում է անվերադարձ ջրօգտագործման շարքին:

Կեղտաջրեր առաջանում են միայն խմելու կենցաղային ջրօգտագործման արդյունքում:

Խմելու կենցաղային ջրօգտագործման արդյունքում առաջանում են կեղտաջրեր, որոնց քանակը կկազմի՝

$$W_{\text{Ջ.Հ.}} = W_{\text{խ.տ.}} - ԿՏ,$$

որտեղ՝

ԿՏ խմելու ջրօգտագործման կորուստն է տոկոսներով՝ 5 %:

$W_{\text{խ.տ.}}$ – խմելու կենցաղային և սննդի պատրաստման ջրածախսը, $\text{մ}^3/\text{տարի}$

$\text{ԿՏ}_{\text{խմելու}} = 365.4 \times (1 - 0.05) = 347.1 \text{ մ}^3/\text{տարի}$:

Միջին օրական՝ 1.1 մ^3 :

Կենցաղային կեղտաջրերը՝ լցվում են անթափանց պատերով և հատակով բետոնային լցարան /կեղտաջրերի հավաքման հոր/, որտեղից պարբերաբար հատուկ ասենիզացիոն մեքենաներով տեղափոխվում են Վեոլիա ջուր ընկերության մոտակա կոյուղու ցանց: Համապատասխան պայմանագիր կկնքվի հանքավայրի շահագործման լիցենզիա ստանալուց հետո:

9.4. Հողային ռեսուրսներ

Հողային աշխատանքների ընթացքում հանվելու է բերրի հողաշերտը և պահպանվելու գործող նորմերին համապատասխան:

Բերրի հողի միջին հզորությունը և հանվող ընդհանուր ծավալը կորոծվի դաշտային հետազոտությունների ժամանակ:

Գրունտի ծավալները ըստ նախնական գնահատման կկազմեն 400000.0 մ^3 :

9.5. Աղմուկ

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվող տեխնիկական և տրանսպորտային միջոցները շահագործելիս ավելանում է աղմուկի մակարդակը:

Տեխնիկական և տրանսպորտային միջոցներ աշխատանքներից գումարային հաշվարկային ծայնային բնութագիրը կազմում է 90 - 95 դԲա անմիջապես աշխատանքների վայրում:

Ըստ գոյություն ունեցող պրակտիկայի³ (энциклопедия по машиностроению стр.445) աղմուկի մակարդակի նվազումը տարածության վրա կազմում է 1 – 10 դԲա 100 մետրի վրա: Միջինացված հաշվարկով 100 մ հեռավորության վրա նվազումը կկազմի մոտավորապես 5 դԲա: Հաշվի առնելով փաստացի հեռավորությունը մոտակա բնակավայրից՝ 1.4 կմ, մնացորդային մակարդակը չի գերազանցի՝ 45 - 50 դԲա:

Հաշվի առնելով վերը բերված հիմնավորումը, հաշվարկային ծայնային ազդեցությունը բնակավայրում կգտնվի նորմայի սահմաններում (գիշերային ժամերին՝ 45 դԲա, ցերեկը՝ 55 դԲա):

Ջրամբարի շինարարության ժամանակ թրթռումներ չեն նախատեսվում:

9.6. Թափոնների կառավարում

Շինաշխատանքների մեկնարկից առաջ պատվարի տարածքում առկա թափոնները պետք է պատշաճ կերպով առանձնացվեն և հեռացվեն: Շինարարության ընթացքում առաջացող հիմնական թափոններն են բանվորների կողմից առաջացող կենցաղային թափոնները (օրինակ՝ թուղթ, ռետինե ձեռնոցներ, մետաղական տարաներ պլաստիկ, շշեր, սննդի մնացորդներ և այլն), շինհրապարակի և ջրամբարի տարածքի մաքրումից բուսականության մնացորդներ, փորված իներտ նյութեր (որոնք օգտագործվելու են պատվարի կառուցման համար հնարավորինս հեռու տարածքության վրա), և վտանգավոր թափոնների սահմանափակ քանակ՝ նավթ, վառելիք, ներկեր կամ արտահոսքից աղտոտված հող և այլն: ՇԿ-ն պետք է մշակի և իրականացնի Թափոնների կառավարման պլան, որպես ԱԱԱԲԿՊի մաս: Համաձայն

³ Г. Зиг. <http://mash-xxl.info/info/369105/>.

միջազգային լավագույն փորձի և ՀՀ օրենսդրության, թափոնների կառավարման պլանը պետք է հետևի թափոններից խուսափելու և դրանց կառավարման հերթականությանը, կրկնակի օգտագործմանը, հնարավորինս տեսակավորմանը, վերականգնմանը, մնացած թափոնների պատշաճ հեռացմանը: Շինարարության կապալառուի կողմից պետք է ներդրվի թափոնների կառավարման համակարգ: Ընդհանուր առմամբ գոյացած շինարարական թափոնները պետք է հնարավորինս տեսակավորվեն տեղում, իսկ շինաշխատանքները պետք է պարբերաբար վերահսկվեն: Արգելվում է շինանյութերի և բոլոր տեսակի թափոնների պահեստավորումը սահմանված վայրերից դուրս, ինչպես նաև թափոնների արտանետումները բաց տարածքներում կամ դեպի գետեր: Շինհրապարակում և բանվորների ճամբարում պետք է տեղադրել աղբամաններ՝ թափոնների պատշաճ հավաքման և տեսակավորման համար: Շինարարության կապալառուն պետք է պաշտոնական համաձայնություն ձեռք բերի քաղաքային իշխանություններից թափոնների տարբեր տեսակների հեռացման վայրերի վերաբերյալ, ներառյալ շինաշխատանքների ընթացքում համայնքային ծառայությունների օգտագործումը՝ կենցաղային թափոնների հեռացման նպատակով: Մետաղի ջարդոն հանդիսացող թափոնները կարող են վաճառվել տեղական վերամշակող լիցենզավորված ընկերություններին: Վտանգավոր թափոնների որոշ տեսակներ, ինչպիսիք են մնացորդային նավթը, վառելիքը, ներկերը կամ արտահոսքից աղտոտված հողը, պետք է պահեստավորվեն պատշաճ վայրերում (փակ տանիքով, օդափոխվող, բետոնապատ և պաշտպանված հատակով): Բոլոր վտանգավոր թափոնները պետք է անվտանգ կերպով փաթեթավորվեն կնքված և հստակ մակնշված տարաներում՝ համաձայն ազգային և միջազգայնորեն ընդունված պահանջների և չափանիշների: Վտանգավոր թափոնների վերջնական հեռացման համար անհրաժեշտ է համաձայնության գալ տեղական լիցենզավորված աղբավայրի ներկայացուցիչների հետ:

Թափոնների քանակները կհաշվարկվեն աշխատանքային նախագծի շրջանակներում:

9.7. Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա

Ջրամբարի շինարարության աշխատանքների իրականացման փուլում տարածքի կենսաբազմազանության վրա վնասակար ազդեցություն կարող են ունենալ՝

- ջրամբարի թասի տարածքների հողաձածկի խախտում,

- հողային զանգվածների փորման-բեռնման աշխատանքների աղմուկը, փոշին, ինչպես նաև տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը և դիզելային վառելիքի, քսայուղերի թափվածքները,

- ճանապարհի վերանորոգման աշխատանքները:

Տարածքներում առկա բուսականության և վայրի կենդանիների ապրելավայրերի մասին ստույգ տեղեկատվությունը, ինչպես նաև դրանց հասցվող վնասը կներկայացվեն դաշտային ուսումնասիրության արդյունքում:

9.8. Առողջապահական գործոններ

Ջրամբարի շինարարության ընթացքում առողջապահական գործոնները կապված են լինելու անձնակազմի անվտանգության և առողջության, ինչպես նաև շրջակա բնակավայրերի բնակչության կենսակերպի և առողջության պահպանման հետ:

Անձնակազմի առողջության պահպանման նպատակով նախատեսված են տնակներ, որոնցում կլինեն՝ հանդերձարան, զուգարան և հանգստի սենյակ (հիմք՝ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15 հրաման): Անձնակազմը ապահովված կլինի անհատական պաշտպանության միջոցներով:

Շրջակա բնակչության հանքավայրի շահագործման հետ կապված առողջապահական խնդիրները պայմանավորված են արտանետումների, արտահոսքերի և աղմուկի գործոններով:

10. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

10.1. Բնապահպանական միջոցառումների ընդհանուր դրույթներ

10.1.1. Մթնոլորտային օդ

Շինարարական հրապարակում առաջացած փոշու և աղմուկի նվազեցման նպատակով նախատեսված են հեռկալ միջոցառումները.

- շինարարական նյութերի և թափոնների տեղափոխման համար անհրաժեշտ է

օգտագործել փակ կամ ծածկով բեռնատար մեքենաներ.

- հողային աշխատանքները ըստ հնարավորության կատարել փոշեորսիչով կահավորված տեխնիկական միջոցներով և սարքավորումներով.
- տրանսպորտային միջոցները և տեխնիկան պետք է պարբերաբար ստուգել, կարգավորել և ապահովել ձայնի խլացուցիչներով.
- շինարարական տարածքը և մոտեցնող ճանապարհները պետք է պարբերաբար ջրվեժ, իսկ խիճը, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածները խոնավացվեն՝ փոշին նվազեցնելու նպատակով (բացի ձմեռային և տեղումներով առատ ամիսներից):

10.1.2. Ջրային ռեսուրսներ

Շինարարության ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու վնասակար նյութերի արտահոսքը բացառելու նպատակով նախատեսվում է՝

- փոշենստեցման համար ջրցանը կատարել ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- անձրևաջրերի և արտադրական հոսքաջրերի հեռացման և հավաքման համար նախատեսել ժամանակավոր պարզարաններ,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել մոտակա մասնագիտացված կետերում,
- դեպի գետ կեղտաջրերի արտահոսքը կանխելու նպատակով շինարարության փուլում աշխատողների համար տարածքում կտեղադրվեն կեղտաջրերի հավաքման հոր կամ բիոզուգարան, բիոզուգարանի և հորի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքունքներով:

10.1.3. Կենսաբազմազանություն

Գործունեության ենթակա տարածքը մասնակի ծառապատված է, տեղ- տեղ աճած տարախոտային բուսատեսակներով: Տարածքը նախկինում օգտագործվել է որպես արոտավայր, ուստի արդեն ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների: Բուսականության պահպանության և կենդանական աշխարհի պահպանության

նպատակով նախատեսված է.

Կենսաբազմազանության վրա ազդեցությունը մեղմելու նպատակով նախատեսվում է.

- Ըստ հնարավորության բացառել ծառահատումները, առկա թփերի մաքրումը կատարել մասնագետների մասնակցությամբ,

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները,

- շինարարական աշխատանքներն իրականացնել ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար,

- հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:

Շինարարական աշխատանքների ժամանակ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է.

1) Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով առանձնացնել պահպանվող գոտիներ:

